Անտառային հեքիաթներ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)
Ա 620

Անտառային հեքիաթներ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 88 էջ:
Ա 620

Այս ժողովածուի մեջ ներառված հեքիաթները բացահայտում են անտառների առեղծվածային ու սքանչելի աշխարհը, որը լի է ոչ միայն վտանգներով, այլ նաև հետաքրքրաշարժ արկածներով: Հեքիաթներից շատերում հերոսները կենդանիներն են, որոնք իրենց մեջ մարդկային հատկանիշներ են կրում:

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-9939-75-500-7
© Էդիթ Պրինտ, 2020

Հենզելն ու Գրետելը

Մի մեծ անտառի բերանում ապրում էին մի աղքատ փայտահատ ու իր ետնակինը: Երկու երեխա ունեին, տղի անունը Հենզել էր, աղջկանը՝ Գրետել:

Առանց էն էլ պակասության մեջ են լինում, թանկությունն էլ որ ընկնում է էն կողմերում, իրենց օրվա հացն էլ չեն կարողանում ճարեն: Մի օր էլ, տեղումը պառկած, փայտահատը դես է մտածում, դեն է մտածում, դարդից մի կողքից մյուս կողքի վրա է շուռումուռ գալիս, վերջը կնոջն ասում է.

– Էս ինչպես պետք է անենք, ա՛յ կնիկ, իսկի բան չունենք, ինչո՞վ պիտի պահենք էս երեխաներին:

– Գիտես, ա՛յ մարդ,– պատասխանում է կինը,– արի առավոտը ծեգին երեխաներին տանենք անտառի խորքը, կրակ անենք, մի-մի կտոր հաց տանք ձեռներն ու էնտեղ թողնենք, մենք ետ գանք մեր գործին: Ճամփեն չեն գտնիլ, որ ետ գան տուն, ու մենք էլ կազատվենք:

– Չէ, ա՛յ կնիկ,– պատասխանում է փայտահատը,– ես էդպես

բան չեմ անիլ, իմ սիրտը չի տանիլ, որ ես իմ ձեռքով իմ երեխաներին տանեմ մենակ թողնեմ անտառում, վերջապես գազանները կհարձակվեն ու կպատառոտեն նրանց:

– Ը՛հ, հիմար,– ասում է կինը,– էսպես թե էնպես, չորսս էլ սովամահ կորչելու ենք, էն ժամանակ գնա ու դագաղների համար տախտակ տաշի...

Էլ հանգիստ չի տալի մարդուն, մինչև որ չի համաձայնում իր հետ:

– Բայց էլի մեղքս գալիս է խեղճ երեխաների վրա,– ասում է փայտահատը՝ կնոջ հետ համաձայնելուց հետո:

Իսկ երեխաների քունը սովից չի տանում, լսում են ամեն բան, ինչ որ խորթ մերը ասում է իրենց հորը:

Աղի-աղի լաց է լինում Գրետելը ու դառնում Հենզելին.

– Մենք կորանք, Հենզե՛լ:

Սո՛ւս կաց, Գրետել ջան,– ասում է Հենզելը,– դարդ մի անիլ, ես սրա ճարը գիտեմ:

Եվ ահա մեծերը քնում են թե չէ՝ Հենզելը վեր է կենում, իր շորերը հագնում, դուռը բաց է անում ու ծլկում փողոց: Լուսինը պայծառ լուսավորում էր, ու իրենց տան առջևը ցրված սիպտակ լափուկները արծաթի փողի նման շողշողում էին: Հենզելը կռանում է, ու գրպանն ինչքան տանում է, էդ քարերով լցնում է: Հետո վերադառնում է տուն: Գրետելին ասում է.

– Հանգիստ կաց, քույրիկ ջան: Քնի՛ր, Աստված մեզ չի կորցնիլ:– Ու նորից պառկում է իր անկողնում:

Առավոտը ծեգում է թե չէ՝ արևածագից առաջ խորթ մերը գալիս է երեխաներին զարթեցնում:

– Դե, շուտ արեք, վեր կացեք, ծույլեր, պատրաստվեցեք գնանք անտառը փետ բերելու:– Հետո ամեն մեկին մի–մի կտոր հաց է տալիս ու պատվիրում.

– Ահա էս ձեզ տալիս եմ ճաշի համար. տեսեք, մինչև ճաշը չուտեք, թե չէ՝ միևնույն է, հետո էլ ոչինչ չեք ստանալու:

Գրետելը հացը դնում է գրպանը, որովհետև Հենզելի գրպաններ-ը բերնեբերան լիքն էին քարերով: Հետո վեր են կենում ու ճանապարհ են ընկնում դեպի անտառը:

Մի քիչ որ անց է կենում, Հենզելը կանգ է առնում ու նայում է ետ՝ դեպի իրենց խրճիթը, ու շարունակ էդպես ետ է մնում: Հերն ասում է,

– Հենզել, ի՞նչ ես շարունակ ետ մտիկ տալիս ու ետ մնում, հորանջելու ժամանակ չի, ոտներդ ժաժ տուր:

– Հայրի՛կ, ես մեր սիպտակ կատվին եմ մտիկ տալի, ա՛յ, էնտեղ կտերը նստել է, կարծես թե մեզ վերջին «մնաս բարովն» է ասում:

Խորթ մերը էստեղ խոսքը կտրում է.

– Ապուշ, իսկի էլ էն մեր կատուն չի, էն կտուրի վրի սիպտակ ծխնելույզն է, որ փայլում է արևի տակ:– Իսկ Հենզելը կտուրի վրա նայելու մասին իսկի չէր էլ մտածում, նա ետ ընկնելով՝ իր գրպանի սիպտակ քարերն էր ցանում ճամփին:

Հենց որ հասնում են անտառի խորքը, հերն ասում է.

– Դե՛, երեխե՛ք, փետ հավաքեցեք, ձեզ համար կրակ անեմ, որ չմրսեք:

Ձեռաց Հենզելն ու Գրետելը ջախ են հավաքում, բերում կիտում: Ջախը վառում են, բոցը վեր է բարձրանում: Խորթ մերը ասում է.

– Դե՛, երեխե՛ք, դուք կրակի կողքին պառկեցեք ու հանգստացեք, իսկ մենք գնանք մի քիչ հեռու փետ անենք. պրծնենք թե չէ՝ կգանք ձեզ էլ կվերցնենք, միասին կգնանք տուն:

Հենզելն ու Գրետելը կրակի կողքին նստում են, ճաշելու ժամանակն էլ որ գալիս է, ամենքն իրենց հացի կտորն ուտում են: Եվ որովհետև կացնի ձեն էին լսում, հավատացած էին, որ իրենց հերը մոտիկ մի տեղ է: Բայց որ թրխկացնում էր, էն կացինը չէր, մի կոճղ էր, որ փայտահատը կապել էր մի չոր ծառի, քամուց գնում էր գալիս, զարկում ծառի բնին ու թրխկացնում: Ու էսպես, երեխեքը երկար-երկար նստում են, աչքները հոգնածությունից փակվում են իրանց-իրանց, ու խորը քնում են:

Մին էլ վեր են կենում, տեսնում են՝ արդեն մութ գիշեր է:

– Ո՞նց պետք է էս անտառից դուրս գանք, Հենզել:

Հենզելը սիրտ է տալիս.

– Մի քիչ կաց, հրես լուսնյակը դուրս կգա, ճանապարհը կգտնենք:

Հենց որ լուսինը դուրս է գալիս, Հենզելը քրոջ ձեռքը բռնում է ու գնում իր ցանած քարերով, որոնք արծաթի փողերի նման պսպղում էին ու ցույց տալիս ճանապարհը:

Ամբողջ գիշերը էսպես մինչև լույս գնում են ու լուսաբացին հասնում են իրենց տունը: Դուռը ծեծում են: Խորթ մերը բաց է անում ու թեև շատ է զարմանում, որ տեսնում է Հենզելն ու Գրետելն են, բայց ասում է.

– Ա՛յ դուք, չար երեխեք, էսքան ժամանակ ի՞նչ եք անտառում քնել ու մնացել, մենք էլ կարծում էինք՝ էլ չեք ուզում մեզ մոտ վերադառնաք:

Իսկ հերն ուրախանում է, որովհետև նրա սիրտը ցավում էր, որ իր երեխաներին մենակ անտառում էր թողել:

Մի քիչ ժամանակ անց կենալուց ետը նորից սով է ընկնում ամեն տեղ, ու նորից երեխաները լսում են, թե ինչպես իրենց խորթ մերը գիշերը հորն ասում է.

– Էլ ետ ինչ ունեինք-չունեինք, կերանք: Մենակ մի կես հաց է մնացել, էն էլ որ կերանք՝ մեր բանը պրծած է: Պետք է էս երեխանցը հեռացնենք: Տանենք անտառը, էս անգամ ավելի խորը, որ էլ չկարողանան ճամփան գտնեն ու ետ գան, թե չէ՝ էլ մեզ փրկություն չկա:

Էս բանը քարի նման ճնշում է հոր սիրտը, ու միտք է անում՝ ավելի լավ է՝ էն մնացած վերջին պատառն էլ բաժանի իր երեխաների հետ:

Բայց ինչ որ ասում է, կինը ոչ մի բան չի ուզում լսի, հենց մի գլուխ հայհոյում է ու նախատում: Դե, ով որ այբն ասել է, բենն էլ պետք է

ասի: Փայտահատն էլ, որ մի անգամ արդեն կնոջ հետ համաձայնել էր, երկրորդ անգամ էլ պետք է համաձայներ:

Իսկ երեխաները, դու մի ասիլ, քնած չեն ու էս բոլորը լսում են: Մեծերը քնում են թե չէ՝ Հենզելը տեղից վեր է կենում, ուզում է առաջվա նման էլի դուրս գնա ու պաշարի համար գրպանը լափուկներով լցնի, խորթ մերը դուռը փակած է լինում, չի կարողանում դուրս գնա, բայց էլի քրոջն ամեն կերպ սիրտ է տալիս.

– Լաց մի լինիր, Գրետել ջան, դու հանգիստ քնիր քեզ համար: Աստված ողորմած է, մեզ չի կորցնիլ:

Առավոտը ծեգին խորթ մերը գալիս է, տեղներիցը վեր կացնում: Ամեն մեկին մի կտոր հաց է տալիս, հացի կտորն էլ՝ առաջվա տվածիցն ավելի փոքր: Եվ ահա անտառը գնալիս ճամփին Հենզելը գրպանում շարունակ մանրում է իր հացի կտորը, շուտ-շուտ ետ մնում ու ցանում ետևներից: Հերն ասում է.

– Հենզել, դու քանի՞ կանգնես ու չորս կողմի վրա հորանջես, ճամփեդ գնա էլի՛:

– Հայրի՛կ, ես իմ ճերմակ աղավնուն եմ մտիկ տալիս, որ հրեն հա՛, մեր տանիքին նստած, կարծես թե ինձ բարև է ղրկում:

– Հիմա՛ր,– կանչում է մերը,– էն իսկի էլ քո աղավնին չի, էն սիպտակ ծխնելույզն է արևի տակ սիպտակին տալիս:

Իսկ Հենզելն էդ ժամանակ հացի փշրանքները հենց գցում է ու գցում իրենց ճամփին:

Երեխաներին տանում են անտառը, էնպես մի խորը տեղ, որ իրենց օրում չէին եղած. էնտեղ էլ կրակ են անում, ու խորթ մերն ասում է.

– Երեխեք, դուք նստեցեք ու, թե քուններդ կտանի, քնեցեք, իսկ մենք մի քիչ ավելի խորը գնանք, փետ հավաքենք, հետո իրիկունը, երբ որ գործներս կվերջացնենք, կգանք ձեզ էլ կառնենք ու կերթանք տուն:

Ճաշի ժամանակը որ հասնում է, Գրետելը իր հացի կտորը բաժանում է Հենզելի հետ, որովհետև Հենզելն իր հացը ճանապար-

հին փշրել էր: Հետո ննջում են. իրիկունն էլ վրա է հասնում, բայց ոչ ոք չի գալիս խեղճ երեխաների ետևից: Զարթնում են կեսգիշերին: Հենզելը սկսում է սիրտ տալ իր քրոջը.

– Գրետել ջան, սպասիր մինչև լուսինը դուրս գա, էն ժամանակ կերևան հացի փշրանքները, որ ես ճամփին շաղ եմ տվել, նրանցով կգտնենք մեր ճամփեն ու կգնանք տուն:

Լուսինը դուրս է գալիս թե չէ՝ երեխեքը ճամփա են ընկնում ետ դեպի տուն, բայց ոչ մի փշրանք չեն գտնում, որովհետև դաշտերի ու անտառների հազարավոր թռչունները վեր էին քաղել: Իսկ Հենզելը շարունակ Գրետելին ասում է.

– Ինչպես որ լինի, մենք կգտնենք ճանապարհը...

Բայց ճանապարհը գտնել չեն կարողանում: Թափառում են գիշերը մինչև լուս, հետո ամբողջ օրը առավոտից մինչև իրիկուն, ոչ մի կերպ չեն կարողանում անտառից դուրս գան, հետն էլ սովում են, որովհետև ուտելու ոչ մի բան չեն ունենում, քացի մի քանի մորին, որ էստեղ-էնտեղ կարմրին էին տալիս խոտերում: Վերջապես, երբ որ էնքան հոգնում են, որ երկուսի ոտներն էլ թմրում են, մի ծառի տակին պառկում են, քնում: Բացվում է երրորդ օրվա առավոտը, ինչ որ երեխեքը թողել էին իրենց հորական տունը: Նորից ճանապարհ են ընկնում դեպի տուն, բայց ամեն մի քայլափոխով միայն անտառի խորքն են մտնում, ավելի ու ավելի խորը, և եթե շուտով օգնություն չհասներ, անպատճառ պետք է կորչեին:

Կեսօրին տեսնում են մի ծառի ճյուղին մի սիպտակ սիրուն թռչուն: Էս սիպտակ սիրուն թռչունը էնպես լավ է երգում, որ երեխեքն ակամայից մարում են տեղներն ու ականջ են դնում նրան: Լռում է թե չէ՝ թևին է անում, երեխանց կողքից թռչում նստում մյուս ծառին, երեխաներն էլ նրա ետևից էսպես գնում են, գնում, մինչև որ հասնում են մի տնակի: Էս տնակի տանիքին թռչունը իջնում է: Երեխեքը մոտենում են տնակին, տեսնում են՝ ինքը՝ տունը,

ամբողջովին հացից է շինած, կտուրը՝ գաթից, իսկ լուսամուտնե-ը՝ թափանցիկ շաքարից:

– Ահա՛, հենց սրանից էլ կսկսենք,– ասում է Հենզելը,– մի լավ քեֆ անենք: Ես տանիքից մի կտոր կուտեմ, դու էլ լուսամուտից կեր, Գրետել. ով գիտի ինչ անուշ է, չէ՞:

Ու Հենզելը ձգվում է դեպի վերև, տանիքից մի փոքրիկ կտոր է կտրում, Գրետելն էլ կռանում է, սկսում է լուսամուտի ապակին ուտել: Հենց էս ժամանակ, ներսից մի բարակ ձեն է գալիս.

– Կը՛րծ, կը՛րծ, կը՛րծ, խը՛զ, խը՛զ, խը՛զ,
Էս ո՞վ է կրրծում տունը՝:

Երեխեքը պատասխանում են.

Էս քամին է անում խիստ,
Չարաճըճին անհանգիստ:

Ու առանց սրանից շփոթվելու շարունակում են ուտել: Հենզելին տանիքն էնքան դուր էր եկել, որ մեծ կտոր կտրեց, իսկ Գրետելը լուսամուտից հանեց մի ամբողջ ապակի, տեղնուտեղը նստեց ու անուշ-անուշ ուտում էր:

Մին էլ հանկարծ դռները ետ են բացվում, ու իր գավազանին հենված դուրս է գալիս մի պառավ-պառավ կին: Հենզելն ու Գրետելը էնքան են վախենում, էնքան են վախենում, որ պատառները ձեռներիցը վեր են գցում: Իսկ պառավը գլուխը շարժելով առաջ է գալիս.

– Վո՛ւյ, երեխեք ջան, էդ ո՞վ բերեց ձեզ էստեղ: Ներս եկեք, եկե՛ք ինձ մոտ կացեք, մի՛ վախենաք, ոչ մեկիդ վնաս չեմ տալ:

Ասում է, թաթներիցը բռնում ու ներս տանում: Տանում է, լավ նախաճաշ է տալիս՝ էլ կաթ, շաքարահաց, էլ խնձոր, էլ ընկուզ:

Հետո երկու տեղ է գցում մաքուր, ճերմակ: Հենզելն ու Գրետելը որ պառկում են, էնպես է թվում, թե՝ դրախտն ընկան:

Դու մի՛ ասիլ՝ պառավն էսպես բարի փաղաքուշ է ձևանում, բայց իսկապես մի չար կախարդ է եղել, ամեն կերպ հետևում է երեխաներին և դիտմամբ էլ տունը հացից է շինել, որ նրանց հեշտ գրավի դեպի իրեն: Ով ճանկն է ընկնում, սպանում է, եփում, լափում, էդ նրա համար մի ուրախություն է:

Կախարդների աչքերը սովորաբար կարմիր են լինում ու հեռու չեն տեսնում, բայց զարմանալի սուր հոտառություն են ունենում, ճիշտ գիշատիչ գազանների պես: Անց կենող մարդու հոտը հեռվից են իմանում: Երբ որ Հենզելն ու Գրետելը նրա տնակի մոտերքը թափառելիս են լինում, նա հեռվից արդեն նրանց հոտն առնում է, չարախնդաց ծիծաղում ու վռչում:

– Է՜, սրանք արդեն ճանկումս են... սրանք էլ ինձանից չեն պրծնիլ...

Առավոտը ծեգին, երեխաներից առաջ, չար կախարդը մի շուտ տեղիցը վեր է թռչում ու երբ տեսնում է նրանց էն պես խաղաղ քնած, լիքը, վարդագույն թշերով, իրեն-իրեն մռմռում է.

– Ուխա՛յ, ինչ անուշ պատառներ են...

Հենզելին բռնում է իր ոսկրոտ ձեռներով, քարշ է տալիս, տանում հավանոցը գցում, վանդակավոր դուռը փակում ու թողնում էնտեղ գոռա՝ ինչքան սիրտը կուզի: Ինչքան էլ գոռա, էլ ի՞նչ պետք է անի: Հետո գնում է Գրետելի ետևից, հրում է ու ճղճղում.

– Դե, շո՛ւտ, վե՛ր կաց, ծո՛ւյլ աղջիկ: Գնա ջուր բեր, եղբորդ համար մի որևէ համով բան եփիր: Հրեն հավանոցում փակել եմ, պետք է նրան կերակրել, որ մի լավ չաղանա ինձ համար... Պետք է չաղանա, որ ուտեմ...

Գրետելն ուզում է լաց լինի, բայց ամեն ինչ զուր էր. մնում է սուսուփուս պառավի հրամանները կատարել: Ու սկսում է Հենզելի համար համով կերակուրներ եփել, իսկ իրեն՝ Գրետելին, բացի չոր ոսկորներից բան չէր տալիս:

Ամեն առավոտ պառավը գնում է հավանոցի դուռը կտրում ու կանչում.

– Հենզել, մատդ դեսը մեկնիր, տեսնեմ՝ չաղացել ես, թե՞ չէ:

Հենզելը մատի տեղակ միշտ մի ոսկոր է դուրս մեկնում, պառավն էլ որ լավ չի տեսնում, չի կարողանում ջոկի, մտածում է, որ Հենզելի մատն է, ու զարմանում է, թե ինչպես է, որ Հենզելն իսկի չի չաղանում:

Էսպես չորս շաբաթը անց է կենում, Հենզելը էլի մնում է նիհար. պառավի համբերությունը հատում է ու էլ չի ուզում սպասի:

– Դե՛, հայդե՛, Գրետել, գնա ջուր բեր. չաղ լինի թե նիհար, միևնույն է, էգուց Հենզելին մորթելու եմ, եփեմ ուտեմ:

Ինչքա՜ն է դարդ անում խեղճ Գրետելը, ինչքա՜ն է դարդ անում ջուր բերելիս:

– Ողորմած Աստվա՜ծ, դու մեզ օգնության հասնես,– կանչում է նա:– Երանի թե անտառումը մեզ գազանները պատառոտեին, գոնե ես ու Հենզելը միասին կլինեինք:

– Ջուր սիրտդ մի՛ մաշի,– ասում է պառավը,– միևնույն է, էլ ոչ մի բան չի օգնի:

Առավոտը վաղ Գրետելը պետք է վեր կենար, պղինձը կրակին դներ, ջրով լցներ ու տակին կրակ աներ:

– Ամենից առաջ դեռ մի թխվածք անենք, ես արդեն փուռը վառել եմ ու խմորը հունցել:

Ասում է պառավն ու տանում է խեղճ Գրետելին փռան առաջը կանգնեցնում, հրում է դեպի բոցավառ փռան բերանը:

– Մտի՛ր,– ասում է,– գնա տես, փետերը լա՞վ են դարսած, լա՞վ են էրվում, խմորը գնդելու ժամանա՞կն է, թե՞ չէ:

Ուզում է՝ Գրետելը կռանա թե չէ, բոթի գցի փուռը, ծածկոցը դնի, որ Գրետելը փռումը խորովվի, հետո հանի ուտի: Բայց Գրետելը գլխի է ընկնում, թե պառավի մտքումը ինչ կա, ասում է.

– Ես չեմ իմանում ինչպես անեմ, որ մտնեմ մեջը...

– Հիմար անասուն, – բարկանում է պառավը, – չե՞ս տեսնում ահագին փռան բերանը, ըհը, մտիկ արա, քիչ է մնում ես էլ մտնեմ մեջը...

Ու ճիշտ որ, տմբտմբալով մոտենում է փռանը, մինչև անգամ գլուխն էլ փռան բերնից ներս է կոխում: Էստեղ Գրետելը հանկարծ ետևից էնպես է ներս բոթում պառավին, որ ընկնում է փռան մեջը, իսկույն ետևիցը ծածկոցը ամուր դնում է ու փակիչը ետևից գցում:

Պառավը ոռնում է, ո՞նց է ոռնում... Բայց Գրետելը ետ է վազում, ու անխիղճ վիուկն էլ էնպես էրվում է պրծնում:

Գրետելը իսկույն վազում է Հենզելի մոտ, հավանոցի դուռը բաց է անում ու աղաղակում.

– Հենզե՛լ, Հենզե՛լ, մենք ազատվեցինք, չար պառավը կործանվեց...

Դուռը բացվում է թե չէ՝ թռչունի նման, որ վանդակում փակված կլինի ու դուռը բաց կանեն, Հենզելը դուրս է թռչում: Ո՞նց են ուրախանում երկուսով, ո՞նց են ուրախանում... իրար ճտով են ընկնում, թռչկոտում են, համբուրվում են և, որովհետև ոչ ոքից վախ չունեին, գնում են մտնում պառավի տնակը, իսկ պառավի տնակի բոլոր անկյուններում դարսված են լինում մարգարտով ու անգին քարով լիքը սնդուկները:

– Էս մեր դռան լափուկներից հո ավելի լավն են,– ասում է Հենզելն ու գրպանները ինչքան որ կտանեին, լցնում է, իսկ Գրետելն ասում է.

– Ես էլ եմ ուզում մի բան տանեմ տուն,– ու նա էլ գոգնոցն է լցնում պռնգեպռունգ:

– Դե, հիմի գնանք, հեռանանք էստեղից,– ասում է Հենզելը:– Քանի լուս է, պետք է դուրս գանք էս կախարդված անտառից...

Մի քիչ որ ճանապարհ են կտրում, հասնում են մի գետակի:

– Մենք ինչպե՞ս անցնենք էս գետը,– ասում է Հենզելը:– Ոչ անց ունի, ոչ կամուրջ:

– Գոնե մի նավակ էլ չկա,– վրա է բերում Գրետելը: – Ահա մի սիպտակ բադիկ է լողում, արի խնդրեմ, գուցե մեզ օգնի, անց կացնի...– ու կանչում է.

Բադի՛կ, բադի՛կ, սիրուն բադիկ,
Լող տուր դեպ մեզ, արի մոտիկ,
Շվարել ենք Հենզելն ու ես,
Առ քո մեջքին, անց կացրու մեզ:

Բադիկը մոտենում է ափին, Հենզելը նստում է բադիկի մեջքին ու քրոջը կանչում է, որ նա էլ գա գավակին նստի:

– Չէ՛,– պատասխանում է Գրետելը,– բադիկը չի կարող երկուսիս էլ միասին տանի, ծանր կլինի: Ջոկ-ջոկ կտանի:

Էդպես էլ անում է բարի թռչունը:

Ջուրը որ անց են կենում ու մի քիչ ճանապարհ են գնում, անտառը հետզհետե ծանոթ է թվում, ու, վերջապես, նկատում են իրենց հորական տունը: Էստեղ սկսում են վազել ինչքան ոտներումը ուժ ունեին, ներս են թափվում ու ընկնում են իրենց հոր վզովը:

Հերն էլ մի հանգիստ ժամ չէր ունեցել էն օրվանից, ինչ երեխանցը թողել էր անտառում, իսկ խորթ մերը արդեն մեռել էր:

Գրետելը իր գոգնոցը բաց է թողնում ու միջի եղածը հոր առաջին շուռ տալիս, էնպես որ, մարգարիտները ու անգին քարերը շաղ են անցնում տանովը մին, իսկ մյուս կողմից էլ Հենզելն է բուռնե-բուռը հանում ու թափում իր գրպանից:

Էստեղ էլ ամեն ցավ ու հոգս վերջանում են, ու ապրում են միասին ուրախ ու անհոգ...

Անտառի տնակը

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում: Էն խրճիթում կնկա ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտահատ:

Մի առավոտ, գործի գնալիս, կնկանն ասում է.

– Ա՛յ կնիկ, էսօր բանս մինչև կեսօր չեմ վերջացնիլ, մեր մեծ աղջկա հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը: Ես էլ հետս մի տոպրակ կորեկ կվերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էն նշանովը գա ու ճամփեն չկորցնի:

Ճաշ է դառնում թե չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է, ճամփա ընկնում: Բայց ծտերը, արտուտները, սարեկներն ու դեղձանիկները շաղ տված կորեկն արդեն վեր քաղած են լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնի: Գնում է, գնում, մինչ արևը մեր է մտնում, ու մութը վրա է հասնում անտառում: Ծառերը շրշում են խավարում, բուերը կանչում, կռնչում, ու աղջիկը սկսում է վախենալ: Մին էլ տեսնում է՝ հեռվում, ծառերի արանքից մի կրակ է փայլփլում:

– Էնտեղ երևի մարդիկ են ապրում, գնամ նրանց մոտ մնամ էս գիշեր,– մտածում է աղջիկն ու գնում էն կրակի վրա:

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում է:

– Ո՞վ ես, ներս արի,– կանչում է ներսից մի ձայն: Աղջիկը ներս է մտնում, տեսնում է՝ հրես նստած մի ալևոր մարդ, գլուխը կախ արած, սիպտակ միրուքն ալիքաձև իջնում է մինչև գետին: Իսկ էն կողմը՝ մի չալ կով, մի հավ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թե ինչպես է ինքը մոլորվել անտառում, ու խնդրում է, որ տեղ տա գիշերը մնալու:

Ծերունին դիմում է իր կենդանիներին.

– Սիրուն հավիկ, իմ լավիկ:
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

Կենդանիները միասին պատասխանում են.

– Լա՛վ:– Էն ժամանակ ծերունին աղջկանն ասում է.

– Համեցե՛ք, մեր աչքի վրա, սիրուն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը՝ լիքը: Համեցեք, մոտեցիր օջախին, կերակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ:

Աղջիկը մտնում է խոհանոց և, ճիշտ որ, ամեն բան գտնում է առատ-առատ: Մի լավ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում է պրծնում.

– Բա ես հոգնած եմ,– ասում է,– հիմի որտե՞ղ քնեմ: Էստեղ կովը, հավն ու աքլորը պատասխանում են.

– Ողջ դրա հետ դու կերար
Ու խըմեցիր, ինչ որ կար,

Մըտիկ չարիր իսկի մեզ,
Գընա, քընի ուր կուզես:

Էն ժամանակ ծերունին ասում է.

– Բարձրացի, սանդուղքի գլխին մի սենյակ կա: Էն սենյակում երկու անկողին կա. անկողինները պատրաստի, ես էլ կգամ, կքնենք:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները գցում է ու ծերունուն չի սպասում, ինքը պառկում է քնում: Մի քիչ հետո ծերունին գալիս է, մոմի լուսով նայում է աղջկանը ու գլուխը ժաժ տալի: Գիշերվա մի ժամանակ, երբ տեսնում է՝ խորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռն է լինում, բաց է անում, աղջկանը թողնում ցած ու կրկին փակում:

Փայտահատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կնկա վրա, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

– Ես ի՞նչ անեմ,– պատասխանում է կինը,– ճաշը տվել եմ մեր մեծ աղջկանը, ղրկել, ինչպես երևում է, ճամփեն կորցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել դեռ:

Փայտահատը մյուս օրն էլ առավոտյան վաղ վեր է կենում, գնում անտառը: Պատվիրում է, որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

– Էսօր հետս ոսպ կվերցնեմ,– ասում է,– որ ճամփին շաղ տամ: Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կտեսնի ու ճամփեն չի կորցնիլ:

Կեսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է, ճամփա ընկնում: Գնում է, գնում, ոչ մի տեղ ոսպ չի գտնում: Դու մի ասիլ՝ դարձյալ թռչունները կերել են, մի հատ էլ չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը ընկնում էլի նույն ծերունու մոտ, հաց ու քնելու տեղ է խնդրում: Ծերունին դիմում է կովին, հավին ու աքլորին.

– Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

– Լա՛վ,– պատասխանում են կենդանիները: Միջնեկ քույրն էլ մեծ քրոջ նման ընթրիք է պատրաստում, ծերի հետ ուտում, խմում, կշտանում, կենդանիների վրա ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է, թե՝ ես որտե՞ղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են.

– Ողջ դրա հետ դու կերար
Ու խըմեցիր, ինչ որ կար,
Մըտիկ չարիր իսկի մեզ,
Գընա, քընի ուր կուզես:

Հենց նա էլ գնում է թե չէ՝ ետևից գնում է ծերունին, գլուխը թափահարում ու դարձյալ թողնում է ներքև:

Երրորդ առավոտը փայտահատը կնկանն ասում է.

– Էսօր մեր փոքրիկ աղջկա ձեռքով ղրկի ճաշը: Նա բարի է ու ականջով: Նա ճամփեն կգտնի, իր քույրերի նման չի, որ դեսուդեն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը ղրկի: Լաց է լինում, ասում է.

– Աչքիս սև ու սիպտակը սա է մնացել, ինչո՞ւ ես ուզում սրան էլ կորցնես մեծերի նման:

– Դու հանգիստ կաց,– ասում է փայտահատը,– սա կորչիլ չի, սա էնպես խելոք է, որ... ես էլ էսօր հետս սիսեռ կտանեմ ճամփին շաղ տալու: Սիսեռը ոսպ հո չի, նրանով անպատճառ ճամփեն կգտնի:

Բայց երբ աղջիկը ճաշն առած անտառն է մտնում, թռչուններն արդեն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում է տարակուսած, չի իմանում որ կողմը գնա: Մտածում է, դարդ է անում, թե հիմի հայրը կսովի, մայրը լաց կլինի...

Ման է գալի, ման, հորը չի գտնում: Երբ մութը ընկնում է, հեռվից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում է էն լուսի վրա: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձյալ դիմում է իր կենդանիներին.

– Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,
Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սրան:

– Լա՛վ...– պատասխանում են կենդանիները: Էն ժամանակ աղջիկը մոտենում է, գուրգուրում հավին ու աքլորին, կովի ճակատը քորում: Ծերի պատվերով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում.

– Ինչո՞ւ ես պետք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն:

Գնում է, կուտ բերում ածում հավի ու աքլորի առջև, կովի համար էլ մի խորոմ խոտ:

– Կերեք,– ասում է,– իմ սիրելիք, այ հիմի ջուր էլ կբերեմ:

Գնում է, մի դույլ ջուր էլ բերում դնում առաջները:

Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում ինչ որ թողել էր ծերունին: Իսկ երբ քնելու ժամանակը գալիս է, ասում է.

– Ժամանակը չի՞ արդյոք, որ ամենքս էլ հանգստանանք...

Սիրուն հավիկ, իմ լավիկ,
Չալ ու նախշուն իմ կովիկ,

Եվ դու, աքլոր փահլևան,
Ի՞նչ եք ասում դուք սըրան:

– Լա՛վ,– պատասխանում են կենդանիները:

– Մեզ հետ կերար դու միասին
Ու հոգացիր մեր մասին,
Բարի գիշեր քեզ, բարի,
Մուրազդ Ասփված կատարի:

Էստեղ աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաստում: Ծերունին գալիս է քնում: Ինքն էլ մյուս մահճակալին է պառկում ու քուն մտնում հանգիստ:

Գիշերվա մի ժամանակ տունը հանկարծ դղրդում է, կարծես քանդվում ու տակնուվրա է լինում: Աղջիկը վախեցած զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նորից:

Առավոտը աչքը բաց է անում՝ ի՞նչ է տեսնում: Տեսնում է պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահավորած դահլիճում, շուրջը թավիշ ու ոսկի, հարավային փարթամ բույսեր ու ծաղիկներ այրվում–վառվում են առավոտյան արևի ճառագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հավատում, ասում է՝ երազի մեջ եմ երևի: Էսպես մտածելիս ներս են մտնում երեք ճոխ հագնված ծառաներ, խոնարհ գլուխ են տալիս ու հարցնում.

– Ի՞նչ կհրամայեք, տիրուհի:

– Լա՛վ, լա՛վ, գնացեք,– պատասխանում է քնաթաթախ աղջիկը,– հիմի վեր կկենամ, ծերունու համար կերակուր կպատրաստեմ, կովին, հավին ու աքլորին կհոգամ:

Կարծում է, թե ծերունին էլ արդեն վեր է կացել: Նայում է նրա անկողնին, տեսնում է՝ ծերունին չկա, տեղը պառկած է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Եվ ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպես խոսում զարմացած աղջկա հետ.

– Էսի՛, սիրուն աղջիկ: Ես էս երկրի թագավորի որդին եմ: Չար վհուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրեի անտառում, ոչ ոք էլ չլիներ ինձ հետ, բացի իմ երեք ծառաներից, նրանք էլ՝ կովի, հավի ու աքլորի կերպարանքով: Եվ էդպես պետք է մնայինք, մինչև հայտնվեր էն բարի աղջիկը, էն քնքուշ սիրտը, որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լիներ սիրող ու կարեկից...

Էն աղջիկը դու եղար:

Քու շնորհիվ էս գիշեր, կեսգիշերին մենք ամենքս ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը:

Ու կանչում է թագավորազնը իր ծառաներին, որ գնան, աղջկա ծնողներին բերեն հարսանիքին:

– Բայց որտեղ են իմ քույրերը,– հարցնում է աղջիկը:

– Նրանց ես փակել եմ ներքնահարկում,– պատասխանում է երիտասարդը:– Էգուց կուղարկեմ անտառը, էնտեղ ածխարարի մոտ ծառայեն ու էնքան մնան, մինչև որ դառնան ավելի բարի ու սովորեն մտածել կենդանիների մասին:

Աղջիկը, չկնիկը և կապիկը

Կար-չկար մի գյուղացի կար իր կնոջ հետ: Նրանք ունեին ուրախ, զվարթ, գեղեցիկ ու բարեսիրտ մի աղջիկ: Բայց մեծ դժբախտություն է պատահում. աղջկա մայրը հիվանդանում ու մեռնում է: Իսկ մի տարի անց հայրն ամուսնանում է իրենց հարևանուհու հետ, որ մի չարսիրտ ու տգեղ կին էր:

Խորթ մայրն ատում էր խեղճ աղջկան, շարունակ անիծում նրան և ստիպում անել ամենածանր գործերը:

Ամառվա մի օր խորթ մայրն աղջկան պատվիրում է գնալ, քաղհանել բրնձի արտը, որ այդ ժամանակ հեղեղված էր ջրով: Երբ աղջիկը հասնում է դաշտ, տեսնում է, որ մի տղա ցանցով մի ձկնիկ է բռնել և ուզում է տուն տանել:

– Քո ինչի՞ն է պետք այդ պստիկ ձուկը,– հարցնում է աղջիկը:

– Կտանեմ, մեր կատվին կտամ,– ասում է տղան:

Աղջիկը խղճում է ձնկնիկին և խնդրում.

– Ինձ տուր այդ ձուկը:

– Սրա՛ն տես: Քեզ համա՛ր եմ բռնել:

– Դե որ այնպես տալ չես ուզում,– ասում է աղջիկը,– արի ես քեզ մի բուռ բակլա տամ, իսկ դու ձուկը տուր ինձ:

– Համաձայն եմ,– ասում է տղան,– տուր բակլան և ստացիր ձուկը:

Եվ նրանք փոխանակում են:

Աղջիկը վերցնում է ձուկը, որ արդեն շունչը փչում էր, և գցում առվակի մեջ: Ձուկն իսկույն աշխուժանում է, բեղիկները շարժում ու լողում:

Շատ ժամանակ չանցած՝ խորթ մայրը նորից աղջկան ուղարկում է արտը քաղհանելու: Հենց որ աղջիկը հասնում է առվակին, տեսնում է, որ իր փրկած ձկնիկն ուրախ լող է տալիս ափի մոտ. մերթ դուրս է թռչում ջրից, ապա սուզվում հատակը և նորից երևում ջրի երեսին: Աղջիկը մի բուռ բրինձ է նետում նրան և առաջ գնում:

Դրանից հետո ամեն օր աղջիկը գալիս էր առվակի ափը և մի կես բուռ բրինձ նետում իր ծանոթ ձկանը:

Մի անգամ խորթ մայրը նկատում է, որ աղջիկը բրնձի հատիկներ է նետում ձկանը:

– Ա՛խ դու, գարշելի՛ արարած,– գոռում է նա:– Ես քեզ ցույց կտամ, թե ոնց են կերակրում գարշելի ձկներին:

Եվ հենց այդտեղ՝ առվակի ափին նա այնպես է ծեծում աղջկան, որ խեղճ աղջիկը երկար ժամանակ ոտքի կանգնել չէր կարողանում:

Ձուկն այս ամենը տեսնում է: «Չարսիրտ կինն իմ պատճառով ծեծեց աղջկան, տխուր մտածում էր նա ջրի հատակին պառկած:– Հիմա երևի այլևս երբեք չեմ տեսնի նրան»:

Բայց որքան է ուրախանում ձուկը, երբ մի քանի օր անց վաղ լուսաբացին աղջիկը վազեվազ գալիս, մի քանի հատիկ բրինձ է նետում ջուրը և ասում.

– Չբարկանա՛ս, սիրելի ձկնի՛կ, սրանից ավելի չունեմ: Խորթ մայրս հիմա ինձ մի բուռ բրինձ է տալիս երեք օրվա համար:

Երևի խորթ մայրը որոշել էր աղջկան սովամահ անել, սակայն աղջիկը դաշտում արմատներ էր հավաքում և ուտում գիշերը, երբ խորթ մայրը քնած էր լինում:

Բայց խորթ մայրը որոշում է աղջկան ոչնչացնել ուրիշ ձևով: Նա գիտեր, որ հեռու անտառից այն կողմ մի խոր լճափոս կա, որի մեջ ապրում է մի կատաղի վիշապ:

Եվ ահա մի օր նա անուշ-անուշ ձայնով ասում է աղջկան:

– Դու ուզում էիր կիմոնո ունենալ: Ահա քեզ կիմոնո գնելու փող: Բայց գնելուց առաջ դու պետք է մի բան անես ինձ համար: Հեռու անտառից այն կողմ կա մի լճափոս, որի ափին հիանալի ծաղիկներ են աճում: Ինչ ծաղիկ ասես, որ չկա այնտեղ: Գնա, այնտեղից մի փունջ քրիզանթեմ բեր ինձ համար, հետո կիմոնոն կառնես:

Հեզ ու հնազանդ աղջիկը ճանապարհ է ընկնում: Նա պետք է անցներ անտառի միջով: Երբ անտառ է ընկնում, տեսնում է մի որսորդ աղեղով նշան է բռնել, ուզում էր սպանել ծառի գագաթին նստած փոքրիկ կապիկին:

– Մի՛ սպանիր, մի՛ սպանիր նրան,– գոչում է աղջիկը:

– Ա՛յ քեզ բան,– ասում է որսորդը:– Ինչո՞ւ պիտի չսպանեմ: Նրա մորթու համար ինձ հարյուր մոն փող կտան:

Աղջիկն շտապ հանում է իր փողերը և մեկնում որսորդին.

– Ահա քեզ հարյուր մոն, միայն թե մի՛ սպանիր խեղճ կապիկին:

– Դա ուրիշ բան,– ասում է որսորդը, փողը վերցնում է և գոհ սրտով վերադառնում տուն:

Իսկ աղջիկը ձեռքով ողջույնի նշան է անում կապիկին և գնում դեպի լճափոսը:

Դեռ հեռվից երևում են գույնզգույն, գեղեցիկ ծաղիկները: Կարմիր քրիզանթեմները բուսել էին հենց ջրի ափին:

Իսկ կատաղի վիշապն էլ հենց դրան էր սպասում, թե հանդարտ լճակի երեսին երբ մարդու ստվեր կերևա:

Եվ ահա աղջիկը մոտենում է լճակին: Էլի մի վայրկյան, և նրա ստվերը կընկնի ջրի երեսին: Եվ այն ժամանակ արդեն ոչ ոք չի կարող նրան փրկել կատաղի վիշապից:

Բայց հենց որ աղջիկը մոտենում է լճակին, ջրի երեսին փռվում է ձկնիկների մի խիտ վտառ: Անթիվ-անհամար ձկնիկները խլտպլտում էին ափի մոտ, պոչով խփում ջրին, հատակից տիղմ բարձրացնում և ջուրը պղտորում: Պարզ ու վճիտ ջուրն այնպես է պղտորվում, որ նրա երեսին ոչ մի կերպ չէր կարելի նկատել աղջկա ստվերը:

Իսկ աղջկա մտքով չէր էլ անցնում, թե ինչ վտանգ էր սպառնում իրեն: Նա անշտապ քրիզանթեմներ էր քաղում, փունջ կապում, և երեկոյան արդեն տանն էր:

Այսպիսով՝ խորթ մոր չար մտահղացումը չի իրագործվում: Բայց նա հույսը չէր կտրում:

Մի քանի օր անց նա բլիթներ է թխում, բայց ամեն մեկի մեջ մի հատիկ թույն դնում, ապա քաղցր ու անուշ ձայնով ասում.

– Իմ սիրելի աղջիկ, շատ ծանր հիվանդ եմ և չեմ իմանում մինչև առավոտ կապրեմ թե չէ: Միայն դո՛ւ կարող ես փրկել ինձ մահից: Հեռու սարի հարավային լանջին բուժիչ խոտեր են աճում: Գնա, այդ խոտերից հավաքիր ու մի փունջ բեր ինձ:

Աղջիկն առանց ժամանակ կորցնելու պատրաստվում է գնալու: Երբ արդեն գոտին էր կապում, խորթ մայրն ասում է.

– Հեռու ճանապարհ ես գնալու: Ես քեզ համար բլիթներ եմ թխել, վերցրու հետդ, երբ սոված լինես, կուտես:

Աղջիկը շնորհակալություն է հայտնում խորթ մորը և գնում հեռավոր սարը: Կեսօրին նա մի փունջ բուժիչ խոտեր հավաքած շտապ ճանապարհվում է դեպի տուն: Նա այնքան էր շտապում, որ նույնիսկ չի նկատում, թե ինչպես է ընկնում այն անտառը, որ-

տեղ օրեր առաջ փոքրիկ կապիկին փրկել էր որսորդի նետից: Տունը դեռ շատ հեռու էր, իսկ աղջիկը շատ էր քաղցածացել: Բայց նա հիշում է հիվանդ խորթ մորը և մտածում. «Երբ տուն հասնեմ, այն ժամանակ կուտեմ, իսկ հիմա պետք է շտապել: Մի քիչ ջուր խմեմ ու վազեմ»:

Նա մոտենում է անտառի գետակին, կռանում, որ խմի և... ջրի մեջ տեսնում է իր ծանոթ ձկանը: Ձուկը բերանը լայն բաց էր արել և աչքն աղջկանից չէր հեռացնում:

– Երևի դու շատ քաղցած ես,– ինչ տամ քեզ ուտելու,– հարցնում է և, հիշելով իր բլիթները, իսկույն բոլորը գցում է ջուրը:

Բլիթները հանգիստ իջնում են ջրի հատակը, իսկ ձուկը նույնիսկ չի մոտենում դրանց: Նա միայն ուրախ-ուրախ պոչը խաղացնում և լողալով հեռանում է:

Երբ աղջիկն առվի ջրից խմում է, հանկարծ քունը սաստիկ տանում է, աչքերն ուղղակի փակվում էին: «Մի րոպե քնեմ այստեղ»,– մտածում է աղջիկը, նստում ծառի տակ և իսկույն քնում:

Շատ չանցած՝ աղջիկն արթնանում է ինչ-որ դուրեկան զրնգոցից: Նա աչքերը բաց է անում և տեսնում, որ այն ծառից, որի տակ ինքը քնած էր, դեղին տերևներ են թափվում: Բայց այդ տերևները գետին ընկնելուն պես ոսկե դրամներ էին դառնում և զրնգում:

Զարմացած աղջիկը վերև է նայում և տեսնում, որ ծառի վրա նստած է այն փոքրիկ կապիկը, որն էլ դեղին տերևներ է թափում իր փրկչի ոտքերի մոտ:

Աղջիկը մի քանի դրամ է վերցնում, նորից ձեռքով հրաժեշտ տալիս կապիկին և իր ճամփան շարունակում:

Երբ խորթ մայրը տեսնում է, որ աղջիկն անվնաս տուն է վերադարձել և կանգնած է իր առաջ, կատաղությունից կապտում է ու չարությամբ հարցնում.

– Դու բլիթները կերա՞ր:

Այստեղ աղջիկը հիշում է, թե ինչպես խորթ մայրն իրեն ծեծեց բրնձի հատիկները ձկանը նետելու համար և սիրտ չի անում խոստովանել, որ բլիթները ձկանն է տվել և ասում է.

– Բլիթները ես կերա:

– Հետո ի՞նչ եղավ,– անհամբեր հարցնում է խորթ մայրը:

– Հետո ես առվից ջուր խմեցի, նստեցի մի ծառի տակ ու քնեցի: Իսկ երբ արթնացա, տեսա ծառի տակ ամբողջ գետինը ծածկված է ոսկե փողերով: Ես նույնիսկ մի քանի հատ հետս բերեցի: Ահա ոսկիները...

Խորթ մայրը փողերը ճանկում է նրա ձեռքից ու մտածում. «Եթե մարդ թունավոր բլիթներն ուտի և անտառի առվակից ջուր խմի, ոչ միայն կենդանի կմնա, այլև կհարստանա»:

Հենց մյուս օրը չարասիրտ կինը բրնձից թունավոր բլիթներ է թխում, վերցնում ու գնում անտառ: Հասնելով գետակի ափը՝ նա բլիթներն ուտում է, առվակի ջրից կուշտ խմում, նստում ծառի տակ և քնում:

Այնքան խորն է քնում, որ այլևս երբեք չի արթնանում:

Գոռոզ չղջիկը

Աշնանային մի ցուրտ օր չղջիկը թռչում էր անտառով և դառնաղի արտասվում: Նրա լացի ձայնը լսեց թռչունների արքան՝ արծիվը:

– Ինչո՞ւ ես լալիս, փոքրիկ չղջիկ,– հարցրեց նա:

– Լաց եմ լինում, որովհետև շատ եմ մրսում:

– Չէ՞ որ մյուս թռչունների համար էլ է ցուրտ, բայց նրանք չեն բողոքում:

– Չէ՛, նրանք չեն մրսում այնքան, որքան ես, որովհետև փետուրներ ունեն, իսկ ես չունեմ:

Արծիվը մի պահ մտածեց, հետո հրամայեց կաչաղակներին, որ բոլոր թռչուններից մեկական փետուր հավաքեն չղջիկի համար: Երբ չղջիկն ամրացրեց բերված փետուրները, դարձավ հրաշագեղ: Նրա թևերը, գլուխն ու փորիկը շողշողում էին ծիածանի բոլոր գույներով: Չղջիկը շատ գոռոզացավ: Նա այլևս չէր խոսում մյուս թռչունների հետ: Օրերով նստում էր ճյուղին, հիանում ջրափոսի սառած հայելու մեջ երևացող իր չքնաղ արտացոլանքով:

Վիրավորված թռչունները բողոքեցին արծվին:

– Չղջիկն իրեն հիմա անտառի առաջին գեղեցկուհին է համարում,– ասացին նրանք:– Նա երևակայում է իրեն, ոչ մեկի հետ չի խոսում և նույնիսկ սիրամարգին է անճոռնի անվանում:

Արծիվը չղջիկին կանչեց իր մոտ և հարցրեց.

– Ճի՞շտ են ասում անտառի թռչունները:

– Իհարկե,– պատասխանեց չղջիկը:– Նրանց ընկերակցությունն ինձ հարմար չէ: Ես նրանցից շատ ավելի գեղեցիկ եմ: Համոզվեք ինքներդ, Ձե՛րդ մեծություն: – Եվ չղջիկը պարզեց թևերը: Արծիվը տեսավ, որ դրանք, իսկապես, չքնաղ են:

– Գերազանց է,– ասաց արծիվը:– Եթե դու կարծում ես, որ այդքան սիրուն ես, ապա թող յուրաքանչյուր թռչուն հետ վերցնի իր փետուրը: Տեսնենք առանց դրանց ի՞նչ տեսք կունենաս:

Բոլոր թռչունները նետվեցին չղջիկի վրա և խլեցին իրենց փետուրները: Իր արտացոլանքը տեսնելով՝ չղջիկը սարսափեց. ջրափոսից իրեն էր նայում մերկ, կնճռապատ, այլանդակ մի արարած: Չղջիկն այնպես ամաչեց, որ դրանից հետո սկսեց միայն գիշերը դուրս գալ, որպեսզի իրեն ոչ ոք չտեսնի:

Մի պարկ խնձոր

Մի օր հայր նապաստակը գնում էր անտառով, սունկ ու հատապտուղ էր փնտրում ձագուկների համար, բայց, հակառակի պես, ոչ հատապտուղ էր հանդիպում, ոչ էլ՝ սունկ: Ու հանկարծ կանաչ բացատի հենց կենտրոնում մի վայրի խնձորենի տեսավ: Ծառի ճյուղերին ու տակը՝ խոտի վրա, անհամար կարմրաթուշ խնձորներ էին շողշողում: Երկար մտածելու կարիք չկար. նապաստակը բացեց պարկի բերանն ու սկսեց խնձոր հավաքել: Նույն պահին թռավ-եկավ ագռավը, նստեց կոճղին ու սկսեց կռռալ.

– Կռռռ, կռռռ, ինչպիսի՜ անպատկառություն. եթե ամեն մեկը գա ու խնձոր տանի, ոչ մի հատիկ չի մնա:

– Զուր ես կռավում,– ասաց նապաստակը,– այստեղ այնքան խնձոր կա, որ ամբողջ անտառին կբավարարի: Իսկ տանը ձագուկներս քաղցած նստած են:

Հայր նապաստակը մի պարկ խնձոր հավաքեց: Պարկը ծանր էր, բարձրացնել չէր կարողանում, այդ պատճառով սկսեց այն

քարշ տալ անտառի արահետով: Գնաց, գնաց ու հանկարծ ինչ-որ փափուկ բանի կպավ: Բարձրացրեց գլուխն ու տեղում քար կտրեց. իր առջև արջն էր կանգնած:

– Ի՞նչ կա պարկիդ մեջ,– հարցրեց արջը:

Նապաստակն իրեն հավաքեց ու ասաց.

– Դե՛… Խնձոր է… Հյուրասիրվեք, Միշա քեռի:

Արջը մի խնձոր կերավ.

– Վատ խնձոր չէ, թարմացնում է,– մռնչաց նա, մի լիքը գիրկ խնձոր հանեց պարկից ու գնաց իր ճանապարհով: Նապաստակն էլ իր ճամփան շարունակեց:

Գնաց, գնաց, մեկ էլ չորս կողմից նրա մոտ վազեցին փոքրիկ սկյուռիկներն ու խմբով գոչեցին.

– Նապաստակ քեռի, մեզ խնձոր կտա՞ք:

Ինչ արած, պարկի բերանը կրկին բացել էր պետք: Նապաստակը սկյուռիկներին էլ խնձոր տվեց ու շարունակեց ճանապարհը: Քիչ անց հանդիպեց իր հին ընկերոջը՝ ոզնուն:

– Փշոտ գլուխ, ո՞ւր ես գնում,– հարցրեց նա:

– Սունկ հավաքելու էի դուրս եկել, բայց ոչ մի տեղ չգտա: Դատարկ զամբյուղով դեսուդեն եմ գնում:

– Տես՝ ինչ լավ խնձորներ կան ինձ մոտ: Զամբյուղդ բեր՝ լցնեմ, ես շատ ունեմ,– ասաց նապաստակն ու խնձոր լցրեց ոզնու զամբյուղի մեջ: Քիչ անց նա հասավ մարգագետին, որտեղ այծն իր ուլիկների հետ զբոսնում էր: Նապաստակը նրանց էլ բաժին հանեց պարկի խնձորից ու շարունակեց ճանապարհը: Շատ էր քայլել, հոգնել էր արդեն ու թմբի վրա նստեց, որ մի քիչ հանգստանա: Մեկ էլ, չգիտես որտեղից, նրա մոտ հայտնվեց խլուրդը. խնձորի անուշ հոտը նրան հանել էր բնից: Իհարկե, ինչպես գլխի ընկաք, այդ օրը խնձոր կերավ նաև խլուրդը: Իսկ նապաստակի տնակում անհամբեր հայրիկին էին սպասում քաղցած ձագուկները: Մայր նապաստակն արդեն չէր հիշում, թե որերորդ հեքիաթն է պատ-

մում նրանց, երբ մեկ էլ ինչ-որ մեկը թակեց դուռը: Փոքրիկ սկյուռիկներն էին: Նրանք զամբյուղով ընկույզ էին բերել.

– Սա ձեզ համար մայրիկն է ուղարկել,– ճվճվացին սկյուռիկներն ու ցատկոտելով գնացին: Մայր նապաստակի աչքերը զարմանքից կլորացան: Նա նոր էր դուռը փակել, երբ կրկին դուռը թակեցին.

– Թակ-թակ-թակ…

Ոզնին էր. նա մեծ զամբյուղով սունկ էր բերել:

– Տանտերն ո՞ւր է,– հարցրեց նա:

– Դեռ չի վերադարձել,– պատասխանեց մայր նապաստակը:

– Դե լավ, շուտով կգա երևի, բայց ես նրան չեմ սպասի, իսկ սա՝ ձեզ,– և ոզնին սնկով լի զամբյուղը դրեց ու գնաց:

– Հրաշք է,– զարմացավ մայր նապաստակը, բայց պարզվեց, որ սա դեռ վերջին անակնկալը չէր: Այծն ուլիկների հետ կաղամբ ու մի սափոր կաթ ուղարկեց, քիչ անց հատակի ճեղքից հայտնվեց խլուրդի գլուխը.

– Սա նապաստակի տո՞ւնն է,– հարցրեց խլուրդը:

– Այո, մենք այստեղ ենք ապրում,– կմկմաց մայր նապաստակը:

– Լավ է,– ուրախացավ անսպասելի այցելուն,– ուրեմն՝ գետնուղին ճիշտ եմ փորել:

Մեկ վայրկյան անց հատակի ճեղքից հայտնվեց կարտոֆիլի, գազարի, ճակնդեղի մի մեծ կույտ:

– Ողջո՛ւյն նապաստակին,– գոչեց խլուրդն ու անհետացավ: Իսկ այդ ժամանակ…

Այդ նույն ժամանակ ագռավը պտտվում էր հայր նապաստակի գլխավերևում ու կռավում էր.

– Կա՜ռռ-կա՜ռռ … Բոլորին խնձոր բաժանեցիր, իսկ ինձ մի խնձոր անգամ չհյուրասիրեցիր:

Նապաստակը շփոթվեց, պարկից հանեց վերջին խնձորն ու պարզեց ագռավին.

– Վերցրո՛ւ, ամենամեծն է…

– Շատ պետք է ինձ քո խնձորը: Ի՞նչ է կատարվում, չեմ հասկանում: Քաղցած ձագերիդ դատարկ պարկն ես տանելու, հա՞:

– Ես… ես… հիմա… հենց հիմա հետ կգնամ և էլի խնձոր կհավաքեմ,– ասաց նապաստակը:

– Հիմա՛ր, չե՞ս տեսնում ինչ ամպեր են կուտակվում: Ո՞ւր կգնաս այս եղանակին:

Բայց հայր նապաստակը չլսեց ագռավին ու հետ վազեց դեպի անտառի խորքը, դեպի խնձորենին: Վազեց, վազեց, տեղ հասավ, բայց այնտեղ…Գլխի ընկա՞ք, թե ում հանդիպեց այնտեղ: Եթե կարծում եք՝ գայլին, ուրեմն՝ չեք սխալվում:

– Ի՞նչ գործ ունես այստեղ,– շրթունքները լիզելով հարցրեց գայլը:

– Ես… ը՛… խնձորի եմ եկել…

– Խնձոր սիրում ես, հա՞:

– Սիրում եմ…

– Իսկ ես շատ եմ սիրում նապաստակներին,– մռնչաց գայլն ու հարձակվեց նապաստակի վրա: Դատարկ պարկը շատ պետք եղավ հենց այդ պահին: Նապաստակն այն գցեց գայլի գլխին, ու մինչև նա կազատվեր դրանից, ինքը փախավ, այն էլ ո՞նց փախավ: Արդեն ուշ գիշեր էր, երբ հոգնած, ոտքերը հազիվ քարշ տալով, հասավ տուն: Ձագուկներն անուշ քնած էին, իսկ անկյունում տխուր-տրտում լաց էր լինում մայր նապաստակը: Դռան ճռռոցից փոքրիկներն արթնացան և նետվեցին հոր գիրկը.

– Ուռա՛, հայրիկը եկավ,– ճչում էին նրանք: Հայր նապաստակը հազիվ էր զսպում արցունքները.

– Ես ոչինչ, ոչ մի բան չկարողացա բերել,– շշնջաց նա: Մեկ էլ դղրդոց լսվեց. ինչ-որ մեկը սարսափելի ուժով հարվածում էր դռանը:

– Գայլն է, շո՛ւտ, թաքնվե՛ք,– բղավեց հայր նապաստակը:

Պատուհանը զրնգոցով բացվեց, ներս խցկվեց արջի բրդոտ գլուխը:

– Մեղր եմ բերել ձեզ համար, ի՜նչ մեղր, լորենու ծաղիկների հրաշալի մեղր,– ասաց արջը, կճուճով մեղրը տվեց վախից ու զարմանքից քարացած մայր նապաստակի ձեռքն ու գնաց:

Առավոտյան երկարականջների ողջ ընտանիքը հավաքվեց սեղանի շուրջը: Թե սեղանին ինչ կար, դուք արդեն գիտեք՝ սունկ ու ընկույզ, կարտոֆիլ ու կաղամբ, գազար, ճակնդեղ, մեղր: Այո՛, հրաշալի առատ սեղան էր դա: Բոլորն ուրախ էին, միայն չարալեզու ագռավը չէր հանգստանում.

– Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե դատարկ պարկից այսքան բարիք ոնց դուրս եկավ… կա՛ռռ, կա՛ռռ…

Զարմանալի աշուղը

Մի աշուղ է լինում: Օրերից մի օր էս աշուղը մենակ վեր է կենում, գնում անտառը: Անտառում դես է մտածում, դեն է մտածում, մինչև որ մտածելու բանը հատնում է: Որ մտածելու բանը հատնում է, «Օ՜ֆ,– ասում է,– ինչ երկար ու ձանձրալի է ժամանակը էստեղ: Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...»:

Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նվագում: Ջութակի ձենը հնչում է անտառում: Էս ձենի վրա անտառի խորքից վազեվազ դուրս է գալիս մի գել:

– Ա՜խ, գելը...– հառաչում է աշուղը:– Բայց ես սրան չէի ուզում... Ես գիլի հետ ինչ անեմ...

Իսկ գելը մոտ է գալիս ու սկսում է խոսել:

– Էդ ինչ լավ ես նվագում, վարպետ: Ինչ կլինի, ինձ էլ սովորեցնես:

– Սրա սովորեցնելն ինչ բան է որ,– պատասխանում է աշուղը:– Կսովորեցնեմ, միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

– Աչքիս վրա,– խոսք է տալիս գելը:– Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

– Դե որ էդպես է՝ ետևիցս արի:

Գնում են: Գնում են, գնում, տեսնում են՝ ճանապարհին մի պառավ կաղնի, մեջը՝ փուչ, ինքը՝ ճղված:

– Դե հիմի լսի՛ր, տես, ինչ եմ ասում,– դառնում է աշուղը գելին:– Եթե ճշմարիտ սրտով ուզում ես նվագել սովորես, ամենից առաջ պետք է առջևի թաթերդ էս ծառի ճեղքումը դնես:

Գելը լսում է վարպետին, առջևի թաթերը դնում է ծառի ճեղքում: Վարպետը ձեռաց կողքի մեծ քարը վերցնում է ու էնպես ուժով զարկում աշկերտի ջուխտ թաթերին, էնպես խորը մխում ծառի ճեղքի մեջ, որ խեղճը տեղնուտեղը նստում է ու մնում է գերի էն ծառին:

– Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,– ասում է վարպետն ու գնում:

Մի քիչ որ գնում է, դարձյալ սկսում է ինքն իր հետ խոսել.

– Օ՜ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...

Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նվագում: Մին էլ տեսնում է ծառերի արանքից դուրս եկավ աղվեսը:

– Հիմի էլ աղվեսը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Աղվեսի հետ ի՞նչ անեմ,– հառաչում է աշուղը, իսկ աղվեսը գալիս է, առաջը կտրում:

– Էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի, ինձ էլ սովորեցնես:

– Ինչու չէ, կսովորեցնեմ,– պատասխանում է աշուղը,– միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

– Աչքիս վրա,– խոսք է տալիս աղվեսը:– Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

– Դե որ էդպես է՝ ետևիցս արի:

Աղվեսն ուրախ-ուրախ ընկնում է վարպետի ետևից, ու գնում են: Գնում են, գնում, մտնում են մի նեղ կածան, երկու կողմից՝ բարձր թփեր: Վարպետն էստեղ կանգ է առնում, ճամփի մի կողմից մի փոքրիկ ընկուզի ծառի ծեր է կռացնում դեպի գետին ու ոտը դնում վրեն, մյուս կողմից էլ մի ուրիշ ծառ ու կանչում է աղվեսին:

– Հապա դե ե՛կ, սիրելիս, եթե ուզում ես բան սովորես, դեսը բեր առջևի ձախ թաթդ:

Աղվեսը լսում է, թաթը մեկնում է: Վարպետը բռնում է, կապում ձախ ծառի կատարին:

– Դե հիմի էլ աջը բեր:

Աջն էլ կապում է աջ կողմի ծառի կատարին: Հետո մտիկ է անում՝ ամուր են կապված, թե չէ, ու բաց է թողնում ծառերի կատարները: Ծառերը ետ են գնում, վերև են թռցնում աղվեսին ու սկսում են ճոճել օդի մեջ:

– Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,– ասում է վարպետն ու շարունակում իր ճամփեն:

Մի քիչ որ անց է կենում, նորից սկսում է ինքն իրեն խոսել.

– Օ՜ֆ, ի՞նչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ... Պետք է մի լավ ընկեր գտնեմ ինձ համար...– Ասում է, ջութակն ուսից վեր է բերում ու նվագում:

Ոստոստալով առաջն է ելնում մի նապաստակ:

– Համեցեք, հիմի էլ նապաստակը... բայց ես սրան էլ չեմ ուզում... Ես նապաստակի հետ ի՞նչ անեմ,– հառաչում է աշուղը, իսկ նապաստակը մոտ է գալի:

– Էդ ի՞նչ լավ ես նվագում, վարպետ: Ի՞նչ կլինի, ինձ էլ սովորեցնես:

– Ինչու չէ, կարելի է, և հեշտ էլ կսովորես: Միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես:

– Աչքիս վրա,– խոսք է տալիս նապաստակը:– Էնպես լսեմ, ինչպես աշկերտը վարպետին կլսի:

– Դե որ էդպես է՝ ետևիցս արի:

Գնում են: Գնում են, գնում, դուրս են գալիս անտառի մեջ մի բացատ: Բացատի մեջտեղը կանգնած է լինում մի բարդի: Վարպետը մի թոկ է հանում, թոկի մի ծերը ծառից է կապում, մյուս ծերը նապաստակի վզից ու կանչում է.

– Հապա, իմ խլուշիկ, դե մի քսան անգամ էս ծառի բոլորքով պտուտ արի, տեսնեմ քո ճարպիկությունը:

Նապաստակը լսում է. քսան անգամ պտուտ է գալիս ծառի բոլորքով: Թոկը փաթաթվում է ծառին, խեղճը մնում է ծառին կպած ու քանի ձիգ է տալիս, քաշում, քաշքշում, էնքան թոկը վիզը կտրում է:

– Էստեղ կաց, մինչև մին էլ ետ կգամ,– ասում է վարպետն ու իր ճամփեն շարունակում:

Վարպետի գնալուց ետը դես է ձիգ տալի, դեն է ձիգ տալի գելը, քարն է կրծում, ծառն է կրծում, էնքան անում է, մինչև թաթերը հանում է կաղնու ճեղքից: Հանում է ու թե չորս ոտն ուներ՝ չորսն էլ փոխ է առնում, կատաղած, գազազած ընկնում է վարպետի ետևից, որ հասնի պատառ–պատառ անի: Օդում ճոճվող աղվեսը հեռվից ազատ գիլին տեսնում է թե չէ՝ սկսում է լաց լինել ու աղաղակել.

– Գել ախպեր, գել ախպեր, հասի՛ր, օգնի՛ր ինձ, էն վարպետը ինձ խաբեց:

Գելը հասնում է՝ ծառերը կռացնում, թոկերը կրծոտում, կտրատում, աղվեսին ազատում, ու երկուսով միասին ընկնում են վարպետի ետևից, որ իրենց վրեժը հանեն:

Գնում են, գնում են, ճամփին պատահում են ծառին փաթաթված նապաստակին: Սրան էլ էստեղ են ազատում ու երեքով միասին լարվում են ընդհանուր թշնամու՝ վարպետի ետևից:

Վարպետը շարունակում է իր ճանապարհն անտառում: Մի անգամ էլ նվագում է, ու էս անգամ բախտը բանում է: Ջութակի ձենը լսում է մի աղքատ փայտահատ, գործը թողնում է, կացինը դնում է կռնատակին, գալիս է կանգնում երգը լսելու:

– Վերջապես եկավ իմ ընկերը,– բացականչում է վարպետը:– Ես մարդ էի որոնում, ոչ թե վայրենի գազաններ: – Ու սկսում է նվագել էնքան սրտառուչ, էնքան հրաշալի, որ փայտահատը զմայլում է, սիրտը կրծքում ուրախությունից խաղս է լինում: Հենց էս ժամանակ վրա են հասնում գելը, աղվեսն ու նապաստակը: Փայտահատը նկատում է, որ նրանց մտքում չար բան կա վարպետի դեմ, իսկույն առաջ է անցնում, բարձրացնում է իր սուր կացինն ու ասում.

– Ով սրա վրա գա, իմացած կենա, որ ինձ հետ է գործ ունենալու:

Գազանները էս որ տեսնում են՝ սարսափում են ու, պո՛ւկ, ետ են փախչում դեպի անտառի խորքերը: Վարպետը փայտահատին շնորհակալություն անելու համար մի երգ էլ նվագում է ու գնում: Գնում է, հասնում է իր տունը, ջութակը պատին կախում ու պառկում: Գիշերը գալիս է, ուզում է քնի, քունը չի տանում: Շարունակ գելը, աղվեսն ու նապաստակն են մտքի մեջին: Մին էլ հանկարծ գիշերվա մի ժամանակը հենց լուսամուտի տակին գելն ու աղվեսը սկսում են ձեն ձենի տալ ու ոռնալ, իսկ նապաստակը նրանց ետևից ծվծվում է.

Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ.
Մեզ տանջել էիր ուզում դուն,
Տանջվիր հիմի դե զարթուն.
Մինչև լուսը մենք էսպես
Հանգիստ քուն չենք տալու քեզ..
Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ...

Երգում են, երգում են կենդանիները: Ջութակն էլ պատի վրիցն է սկսում իրեն-իրեն նվագել նրանց հետ ու էնպես աղեկտուր, էն-

պես ողբալի, որ խեղճ վարպետը չի իմանում՝ ուր կորչի էն երգի ու երաժշտության ձենից: Ամբողջ գիշերը չի կարողանում աչքը կպցնի, տանջվում է ու տանջվում:

Ծերերն ասում են՝ իբրև թե վարպետը էն օրվանից ետը ինչքան ապրեց աշխարհքում, ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում էր էս տխուր, սրտաճմլիկ երգը.

Ճը՛զը, վը՛զը, քաջ վարպետ,
Էն ի՞նչ արիր դու մեզ հետ...

Ու ջութակը ողբում էր հետը: Ամեն գիշեր, ամեն գիշեր մինչև լուսը, մինչև իր մահը:

Յոթ եղբոր մեկ քույրը

Լինում է, չի լինում՝ մի ռանչպար[1] մարդ է լինում, անունը՝ Սարգիս: Փոքր տարիքում նրան Սաքի էին ասում, էդպես Սաքի էլ մնաց ողջ կյանքում: Նա մեծ տղա էր արդեն, երբ հայրն ու մայրը մահացան, ու ինքը մնաց որբ: Հայրը որդուն թողել էր երկու եզ, մի կով, մի ավանակ, մեկ էլ մի գութան: Երբ ծնողների մահից հետո մեկ տարին անցավ, բարեկամները հավաքվեցին, խորհրդակցեցին, մի սիրուն աղջիկ ընտրեցին, անունը՝ Գյոզալ. տղային համոզեցին, պսակեցին, հարսանիք արեցին, ընտանիքի տեր դարձրին:

Սաքին հոր գործին էր՝ ռանչպարություն էր անում: Երբ գարունը բացվում էր, գնում էր հանդ՝ վար անելու: Մի քանի եզնատերեր միավորվում էին, իրենց եզները, գութանը, փոկը[2], հոտաղներին միասին բանեցնում, միասին վար էին անում: Ամեն մեկ եզ ունեցողի համար մեկ օր էին վար անում, զույգ լծկան

[1] Երկրագործ, հողագործ
[2] Պարանը

ունեցողի համար՝ երկու օր, գութանի տիրոջ համար՝ երկու օր, փոկի տիրոջ համար՝ մեկ օր, մաճկալի համար՝ երկու օր, հոտաղի համար՝ մեկ օր: Էսպես համատեղ աշխատելով՝ բոլորի վարուցանքն էլ մեկ ամսում ավարտում էին:

Ամուսնությունից մեկ տարի անց Գյոզալն ու Սաքին մի տղա ունեցան, անունը դրեցին Դավիթ: Տասը տարում Սաքին ու կինը յոթ արու զավակ ունեցան, ամեն մեկն ասես մի թագավոր՝ մեկը մեկից խելոք, մեկը մեկից ուժեղ, մեկը մեկից ճարպիկ, մեկը մեկից սիրալիր: Բայց ամենախելացին ու եռանդունը փոքր որդին էր՝ Արսենը:

Ամեն անգամ, երբ Գյոզալի ծննդաբերելու ժամանակը մոտենում էր, երեխաները նստոտում էին բակի սառը քարերին ու կանչում.

- Աստվա՛ծ, նանին աղջի՛կ բերի, Աստվա՛ծ, նանին աղջի՛կ բերի:

Բայց Աստված նրանց խոսքը չէր լսում: Հակառակի պես ամեն ամգամ Գյոզալը տղա էր ունենում: Սաքիի տրամադրությունն էնտեղ էր ընկնում, երեխաներինը՝ էստեղ: Տղաները շատ էին ուզում քույր ունենալ և տխրում էին, որ նանին էդպես էլ աղջիկ չէր ունենում:

Երբ յոթերորդ որդին՝ Արսենը, ծնվեց, ու նրան տարան եկեղեցում կնքեցին, եկան տուն, մեծ հյուրընկալություն արեցին, Սաքին ու Գյոզալը որոշեցին, որ էլ երեխա չեն ունենալու. յոթը բավական է:

Անցավ տասնյոթ տարի. Սաքիի փոքր որդին արդեն տասնյոթ տարեկան էր, մեծը՝ քսանյոթ: Ամուսինները մտքափոխ եղան, որոշեցին մի զավակ էլ ունենալ. տան փոքրիկը համով-հոտով է լինում, իսկ իրենց տանը քանի տարի էր արդեն, ինչ երեխայի ձայն չէր լսվել: Համ էլ յոթ որդիները, խոսքները մեկ արած, ոտքները դրել էին մի մաշիկի մեջ, թե մինչև նանին մի աղջիկ չբերի, մենք մի քույր չունենանք, մեզնից ոչ մեկն էլ չի ամուսնանա: Քառասունյոթ տարեկանում Գյոզալը դարձյալ հղիացավ, թե՝

ով գիտի, գուցե էս անգամ աղջիկ ծնվի: Երբ երեխայի ծնվելու ժամանակը մոտեցավ, տղաները հավաքվեցին զրույցի: Դավիթը հարցրեց եղբայրներին.

- Որ նանին էս մեկն էլ տղա բերի, ի՞նչ ենք անելու:

Ամեն մեկը մի բան ասաց: Մեկը թե՝ թող նանին տա մի անզավակ կնոջ, մյուսը թե՝ մի արկղի մեջ տեղավորենք, դնենք գետի վրա, կքշի, կտանի, մեկնումեկին բաժին կհասնի՝ կտանի, կպահի: Արսենը մտածեց, մտածեց ու ասաց.

- Չէ՛, ո՛չ էս, ո՛չ էն, եկե՛ք մեր հոր հետ էսպես պայման կապենք: Մենք գյուղից դուրս գանք, գնանք ուրիշ տեղ. թե նանին աղջիկ ունեցավ, թող ապին[3] ճախարակը դնի կտուրին, թե տղա՝ գութանը դնի կտուրին: Ամեն օր մեզնից մեկը ձին նստի, գա Լաստի խուրթի գլխից նայի, լուրը մեզ բերի: Թե աղջկա լուր բերեց, տուն կդառնանք, կնունք կանենք, կուրախանանք, թե տղի լուր բերեց, մեզնից ոչ մեկն էլ տուն չի գնա, կմնանք օտար երկրում:

Արսենի պայմանը եղբայրներին դուր եկավ, էդպես էլ արեցին: Սաքին որդիներին շատ խնդրեց-աղաչեց, որ չգնան. ինչ կլինի՝ կլինի, Աստծու տվածից չես փախչի: Որդիները չլսեցին: Հանեցին ձիերը, խուրջիններն ուտելիքով լցրին, յափնջիները[4] ծալելեցին, ձիերի թամբերից կապեցին, մտան տուն, մորը համբուրեցին, դուրս եկան բակ, հորը համբուրեցին, թռան, նստեցին ձիերին, քշեցին, փոշի բարձրացրած գնացին: Սաքին մնաց կանգնած՝ աչքը նրանց հետևից: Բոլոր գյուղացիները դուրս էին եկել տեսնելու, թե ինչ է կատարվում: Մեկը մյուսին հարցնում էր. «Սաքու տղերքը թոբուն կապած[5] ո՞ւր գնացին»: Աշխարհում թաքուն բան չի մնում: Մեկ օրվա մեջ լուրն ընկավ բոլորի ականջը. ով բանուգործ չուներ, Սաքիի տղաներից էր խոսում:

---

[3] Հայրը
[4] Վերնազգեստ
[5] Խմբով

Դավիթն առջևից, Արսենը հետևից. տղաների խումբը գնաց, մի մեծ անտառի խորքում ցած իջավ: Էդտեղ մի տուն սարքեցին, տեղավորվեցին: Եղբայրներից երեքը որսի էին գնում, երեքը՝ առևտրի: Օրը մեկ անգամ Արսենը ձին հեծնում, հասնում էր Լաստի խութը, դիտակը դնում աչքերին, նայում իրենց տան կտրին: Տեսնում էր՝ կտրին ոչինչ չկա, հետ էր դառնում եղբայրների մոտ:

Մի օր էլ միջնեկ եղբայրներից մեկը գնաց Լաստի խութ: Դիտակը դրեց աչքերին, նայեց, տեսավ, որ իրենց կտրին գութան է դրված: Աչքերին չհավատաց. դիտակով նայեց, առանց դիտակ նայեց՝ գութան է, ու վերջ, խոփն էլ լավ պսպղում է: Ձիու սանձը քաշեց, գլուխը շրջեց, ասպանդակեց, թռավ եկավ, հասավ ան-տառ: Եղբայրները տանը չէին: Տղան նստեց տան շեմին ու սկսեց ինքն իրեն խոսել.

- Տեսնես յոթ եղբորով ում ենք վատություն արել, որ Աստված էսպես մեզ պատժում է: Ի՞նչ կլիներ՝ նանին աղջիկ բերեր, մենք էլ տուն դառնայինք:

Էդ մտքերի հետ էր, երբ եղբայրները մեկը մյուսի հետևից տուն եկան: Վեց եղբայրն էլ թևաթափ կանգնեցին, երբ տեսան, որ նա անտրամադիր նստած է: Դավիթը թե՝ ի՞նչ կա, ի՞նչ լուր ես բերել:

- Գութան է կտրին դրած:

Յոթ եղբոր տրամադրությունն էլ ընկավ:

- Հիմա ի՞նչ ենք անելու,- հարցրեց Արսենը:

Դավիթը գլուխը բարձրացրեց, մեկ առ մեկ նայեց եղբայրներին, հետո ասաց.

- Մենք մեր խոսքի տերն ենք: Երդվել ենք, ուրեմն տուն չենք գնալու:

Էդպես էլ արեցին. ոչ մեկը տուն չգնաց, դարձան էդ անտառի իսկական բնակիչները:

Դու մի ասա՝ Գյոզալը մի սիրուն, բամբակի պես սպիտակ, ոսկի մազերով աղջիկ էր ունեցել: Սաքին շտապ-շտապ ճախարակն առել, բարձրացել էր տան կտուրը, որ որդիները տեսնեն՝ քույր են ունեցել, շուտ տուն դառնան, ուրախանան, քեֆ անեն: Բայց Գյոզալը մի շատ վատ հարևանուհի ուներ, անունը՝ Մաքաղաթ: Աչքի մեկը կույր՝ մի չար կին էր Մաքաղաթը՝ էնքան չեչոտ դեմքով, որ ջուր լցնեիր երեսին, կլցվեր մաշկի անցքերի մեջ: Իր նման տգեղ վեց աղջիկ ուներ, ոչ մեկին չէր կարողանում ամուսնացնել, տղա էլ չուներ: Նախանձից սիրտը պայթում էր, որ Գյոզալը յոթ գեղեցիկ որդի ուներ, հիմա էլ ոսկեմազիկ աղջիկ է ունեցել: Ուր որ է՝ որդիներն էլ կդառնան տուն, կուրախանան իրենց գեղեցկուհի քրոջով:

Մութն ընկնելուց հետո էս չար ու նախանձ կինը բարձրացել էր Սաքիենց կտուրը, ճախարակը շալակել իջեցրել, գութանը տարել, դրել դրա տեղը, ինքն էլ իջել ցած, մտել հարևանների տուն՝ աչքալույս տալու:

Սաքին երեք օր սպասեց, բայց որդիները չերևացին: Մարդ ու կին մնացել էին զարմացած, թե ինչ է պատահել, որ երեխաները չեկան: Չորրորդ օրը Սաքին բարձրացավ կտուրը, տեսավ, որ ճախարակի փոխարեն գութանն է դրված: Ասես դույլով սառը ջուրը լցրին գլխին. փշաքաղվեց, ոտքերը թուլացան, ուշաթափվեց, հենց գութանի վրա ընկավ: Իր բախտից էր, որ ընկերներից մեկը եկել էր նրան աչքալույս տալու:

- Սաքին ո՞ւր է,- հարցրեց նա Գյոզալին,- մաղարիչ պիտի անի ինձ, թե չէ գլխարկը կտոր-կտոր եմ անելու: Է՛լ ինչ է ուզում. աղջիկն էլ ունեցավ:

- Կտուրը բարձրացավ,- ասաց Գյոզալը:

Բայց բավականին ժամանակ անցավ, իսկ տանտերը չկար ու չկար: Ընկերը բարձրացավ կտուրն ու տեսավ, որ Սաքին ուշաթափված ընկել է գութանի վրա: Հարայ-հրոց գցեց, մարդիկ հավաքվեցին, Սաքիին զգուշորեն ցած իջեցրին, կսմթելով, գլխին սառը ջուր լցնելով՝ մի կերպ ուշքի բերեցին: Երբ Սաքին ուշքի եկավ, գլխին տվեց, լաց եղավ.

- Ա՛յ կնիկ, մեր տունը քանդվեց, մեր յոթ էրեխին կորցրինք. նրանք էլ տուն էկողը չեն: Ինչ-որ մեկը ճախարակը կտրից իջեցրել, գութանն է տեղը դրել:

Գյոզալն էլ իր հերթին սուգուշիվան դրեց, վա՛յ կանչեց.

- Մեր տան թշնամին Մաքաղաթն է, նրանից բացի ոչ ոք էդպես բան չէր անի,- լաց եղավ նա,- նրա մի աչքն էլ քոռացած տեսնեմ՝ սիրտս հովանա: Նրա աղջիկներն էլ տունուտեղից գնան, ինքն էլ ինձ նման կսկծա:

Սաքին մի քանի օր հիվանդ պառկեց: Հարևանները գալիս, սիրտ էին տալիս նրան, թե՝ քեզ տղամարդու պես պահի՛ր, ուր էլ լինեն, թող առողջ լինեն, օրերից մի օր կգան: Ոտքի կանգնելուց հետո Սաքին կնունք արեց, աղջկա անունը դրեց Գոհար: Մի ամիս անց, երբ որդիներից էդպես էլ ոչ մի լուր չունեցավ, մի օր հանդից տուն եկավ ու կնոջն ասաց.

- Գյոզա՛լ, ես գնում եմ տղաներիս հետևից. թե գտա, նրանց հետ տուն կգամ, թե չգտա, ողջ աշխարհը ման եմ գալու մինչև մեռնելս:

Սաքին պահած մի տասը ոսկի ուներ: Տասը ոսկին շարեց, կարեց տաբատի ծալքի մեջ, համբուրեց կնոջն ու աղջկան, մահակը դրեց ուսին ու ճանապարհ ընկավ՝ Գյոզալի աչքն արտասուքի մեջ թողնելով:

Էսպես անցնում էին տարիները: Գյոզալի աչքը ճանապարհին էր. ո՛չ որդիներն էին երևում, ո՛չ էլ Սաքին:

Գոհարը տասներկու տարեկան աղջիկ էր դարձել արդեն: Նրա ոսկի մազերը, կեռ-կեռ հոնքերը, սպիտակ-բամբակ դեմքը, բարձր հասակը տեսնողին խելքահան էին անում: Մայրը նրան թույլ չէր տալիս բակից դուրս գալ. վախենում էր, որ կգողանան, ու ինքը կմնա ձեռները ծոցում[6]:

Մի օր Գոհարն ընկերուհիների հետ խաղում էր: Աղջիկներից մեկի ուլունքը կորավ: Բոլորը հերթով սկսեցին երդվել, որ իրենք չեն տեսել: Մեկը հոր արևով էր երդվում, մյուսը՝ եղբայրների: Գոհարն էլ ասաց.

- Ես հեր ու ախպեր չունեմ. ես էլ իմ նանի արևով եմ երդվում, որ չեմ տեսել:

Ընկերուհիներն սկսեցին ծիծաղել նրա վրա:

- Էդ ի՞նչ ես խոսում: Յոթ ախպեր ունես, ասում ես՝ ախպեր չունեմ: Հերդ ու ախպերներդ քո դարդից գնացին կորան:

Գոհարը բան չասաց, լաց եղավ, փախավ իրենց տուն:

Երբ Գյոզալն իմացավ պատահածը, գլխին տվեց.

- Կուրանա՛ քեզ ասողը: Բա դա ասելու բա՞ն էր, որ ասել են: Ինչ եղել, եղել է, բալա՛ ջան, ի՞նչ կարող ենք անել:

Հաջորդ օրը Գոհարը մորից թաքուն մի կապոց հաց ու պանիր կապեց մեջքին ու տնից փախավ, որ գնա եղբայրներին գտնի: Գնա՜ց, գնա՜ց, շատն ու քիչը Աստված գիտի, հասավ մի անտառի: Մութը կամաց-կամաց վրա տվեց, Գոհարն սկսեց վախից դողդողալ: Փնտրեց, ծառի մի մեծ փչակ գտավ, մտավ մեջն, ու հոգնած երեխա էր, քիչ անց քնեց: Առավոտյան աչքերը բացեց, տեսավ՝ արևը դուրս է եկել, թռչունները ծառերի վրա ծլվլում են:

[6] Շվարած

Փչակից դուրս եկավ, գնաց հասավ մի մեծ քարաժայռի: Տեսավ՝ ժայռի տակից մի զուլալ աղբյուր է շողշողում: Նստեց աղբյուրի մոտ, մեջքի կապոցը քանդեց, հաց ու պանիրը կերավ, աղբյուրի պաղ ջրից կուշտ խմեց, կապոցն էլի կապեց ու ճամփա ընկավ: Մի քիչ էլ որ գնաց, տեսավ՝ ճանապարհ չկա: Բարձրացավ մի ծառի վրա, շուրջբոլորը նայեց ու տեսավ, որ հեռվում մի տուն է երևում: Ծառից իջավ ու գնաց տան կողմը: Մոտեցավ, տեսավ՝ դուռը բաց է: Վախվխելով մտավ ներս, իսկ էնտեղ ոչ ոք չկար: Տանը վաղուց ոչ ոք մաքրություն չէր արել. ամեն ինչ թափթփված էր, անկարգ: Գոհարը հավաքեց, մաքրեց, դասավորեց ամեն ինչ, օջախի մոխիրը խառնշտեց, մի ածուխ գտավ, վրան փչեց, թեժացրեց, չոր ճյուղերով կրակը բորբոքեց: Հետո փնտրեց, ոսպ ու ձավար, սոխ ու կարտոֆիլ գտավ, աղբյուրից էլ ջուր բերեց ու մի մեծ կաթսա ճաշ եփեց: Երբ բոլոր գործերն ավարտեց, մի սնդուկ գտավ, որը կիսով չափ լցված էր հին շորերով: Մտավ էդ հին շորերի տակ թաքնվեց ու սկսեց բանալու անցքից նայել:

Մեկ էլ տեսավ՝ յոթ գեղեցիկ երիտասարդ իրար հետևից մտան տուն:

- Էս մեր տունը ո՞վ է էսպես մաքրել, հավաքել, դասավորել,- հարցրեց նրանցից մեկը: Զարմացած նայեցին իրար:

- Նայե՛ք, մեզ համար ճաշ էլ են եփել,- ասաց մեկ ուրիշը:

Փնտրեցին սենյակներում, դեսուդեն նայեցին, ոչ մեկին չգտան: Նստեցին ճաշելու, կուշտ կերան ու շատ հավանեցին կերակուրը:

- Ի՞նչ համով էր,- ասացին,- ոնց որ մեր նանի եփած ճաշը լիներ: Տեսնես ո՞վ է եփել:

Տղաները հոգնած էին. ուտելուց հետո յոթն էլ պառկեցին քնեցին, իսկ առավոտյան վաղ արթնացան, հագնվեցին ու դուրս եկան տնից:

Գոհարը սնդուկից դուրս եկավ, նորից տունը հավաքեց, ափսեները լվաց, տեղավորեց, գնաց ջուր բերեց, հատակը մաքրեց: Տանտերերը արջի միս էին բերել իրենց հետ, մի կաթսա ճաշ

եփեց էդ մսով, կրակը մոխրով ծածկեց, ինքը դարձյալ մտավ իր թաքստոցն ու սկսեց սպասել: Քիչ անց տղաները եկան: Տեսան՝ տունը հավաքած, հատակը փայլփլում է, երեկվա ճաշի ափսեները մաքուր լվացված, տեղավորված են, արջի մսով ճաշը պատրաստ դրված է օջախին, կուժն էլ լիքը աղբյուրի պաղ ջուր: Նստեցին, կուշտ կերան, ջուր խմեցին, պառկեցին քնեցին: Իսկ առավոտ վաղ էլի գնացին իրենց գործին:

Մի օր Գոհարը մոռացել, կրակը մոխրի տակ չէր անթեղել: Երբ հիշեց, արդեն ուշ էր. որքան էլ ձեռքերով մոխիրը խառնշտեց, կայծի նշույլ չգտավ: Դուրս եկավ, նայեց շուրջբոլորը, ոչ ոք չկար: Բարձրացավ ամենաբարձր ծառի կատարն ու սկսեց դիտել շրջակայքը: Երբ ուշադիր նայեց, տեսավ, որ շատ հեռվում ծուխ է բարձրանում: Իջավ ծառից, տնից մի կարմիր թելի կծիկ գտավ, թելի ծայրը կապեց տան դռանը ու, կծիկը քանդելով, գնաց ծխի կողմը: Երկար քայլեց, մինչև հասավ մի տուն: Դուռը թակեց, մտավ ներս ու տեսավ, որ մի պառավ կին մեծ կաթսան դրել է կրակին ու ամբողջական մի ոչխար է եփում մեջը:

- Նանի՛ ջան,- ասաց Գոհարը,- ի՞նչ կլինի՝ ինձ մի բուռ ածուխ տաս, տանեմ կրակ անեմ, ճաշ եփեմ:

Պառավը զարմացած նայեց աղջկան:

- Ա՛յ բալա, էս ո՞նց ես եկել, հասել էստեղ: Շուտ փախի՛ր: Իմ տղեն մարդագել է, ուր որ է՝ գալու է: Քեզ որ տեսավ, կուլ է տալու: Կրակի ածուխներն էլ ինքը հաշվել, նոր է գնացել: Երբ տեսնի, որ պակասում են, կընկնի հետևիցդ: Ո՞նց տամ:

Գոհարը վիզը ծուռ կանգնել ու լաց էր լինում: Պառավի մեղքը եկավ: Ածուխներից մեկը կիսեց, տվեց նրան ու ասաց.

- Դե՛, շուտ փախի՛ր, քանի մարդագելը չի եկել:

Ածխի կեսը բռնած, փչելով, որ չհանգչի՝ Գոհարը կարմիր թելի հետքով եկավ, հասավ տուն: Կրակը վառեց, ճաշը դրեց վրան, ինքը գնաց դռան փակը գցեց, որ եթե հանկարծ մարդագելը գա էլ, չկարողանա տուն մտնել:

Մարդագելն իրենց դռնից մտավ տուն թե չէ, մոր վրա գոռաց.

- Տնից մարդահոտ է գալիս. ո՞վ է, ասա՛, որտե՞ղ է թաքնվել:

Պառավը երդվեց, թե ինքը մարդ չի տեսել, բայց մարդագելը չհավատաց: Փնտրեց սենյակում, մարդ չգտավ, հետո եկավ, կռացավ կրակի մոտ, ածուխները հաշվեց ու գոռաց մոր վրա.

- Բա ասում ես՝ մարդ չի եկել: Էն ածխի կեսն ո՞վ է տարել, ասա՛ տեսնեմ:

Պառավը ինչ որ եղել էր, վախից պատմեց: Մարդագելը դուրս եկավ, շեմին կանգնեց, հոտոտեց, չորս կողմը տնտղեց ու հանկարծ աչքով ընկավ կարմիր թելը: Գլխի ընկավ իր անելիքը. թելի հետքով գնաց, հասավ յոթ եղբոր տունը: Տեսավ՝ դուռը փակ է: Սկսեց թակել դուռը, բայց Գոհարը ձայն-ծպտուն չէր հանում: Մարդագելը տեսավ, որ աղջիկը դուռը չի բացելու, որոշեց ուրիշ կերպ խաբել նրան:

- Աղջի՛կ ջան,- ասաց,- ինձնից մի՛ վախեցիր: Ես քո եղբայրների մոտից եմ գալիս: Նրանք քեզ համար մի մատանի են ուղարկել: Դուռը բա՛ց, տամ քեզ:

Բայց Գոհարը, սուսուփուս կանգնած, տեղից չէր շարժվում: Մարդագելը տեսավ, որ չի համոզվում, ուրիշ բան մտածեց:

- Դե՛, որ վախենում ես,- ասաց,- դուռը չես բացում, մատդ դռան արանքից հանի՛ր, ես մատանին անցկացնեմ մատդ, թողնեմ գնամ:

Գոհարը վախվխելով մատը դռան արանքից դուրս հանեց, մարդագելն արագ բռնեց մատը, ուժեղ կծեց ու սկսեց արյունը խմել: Գոհարին արնաքամ արեց, թողեց գնաց:

Երեկոյան կողմ եղբայրները եկան, տեսան՝ իրենց տան դուռը ներսից փակ է: Հրեցին, դուռը տեղահան արեցին, մտան ներս ու տեսան մի սիրուն փոքրիկ աղջիկ ուշաթափված ընկած է: Գրկեցին նրան, տարան անկողնում պառկեցրին, ջուր ցողեցին դեմքին, հազիվ ուշքի բերեցին: Մի քանի օր լավ կերակրեցին, եփած մուգ կարմիր գինի խմեցրին, մինչև աղջիկը կազդուրվեց,

ոտքի կանգնեց, սկսեց ասել-խոսել, ծիծաղել ու գլխին եկածը մեկ առ մեկ պատմեց նրանց. թե ինչպես ընկերուհիները ծաղրեցին իրեն, ինչպես փախավ տնից, գտավ էդ տունը, ինչպես կրակ բերեց մարդագելի տնից, ինչպես մարդագելն իր մատը կծեց: Մնացածն էլ չէր հիշում:

Երբ տղաները լսեցին էդ պատմությունը, ճանաչեցին իրենց քրոջը, սկսեցին իրար ձեռքից խլել նրան, գրկել, համբուրել: Հետո հանդարտվեցին, նստեցին խորհուրդ անելու, թե ինչ պիտի անեն դրանից հետո:

- Էլ էստեղ մնալն ամոթ է,- ասաց Դավիթը: - Հենց հիմա վե՛ր կացեք, ինչ ունենք-չունենք հավաքենք, բարձենք ձիերին ու տուն գնանք, թե չէ մեր տանջված մերը ձեռքից կգնա:

Արսենը հակաճառեց.

- Նանին տասներկու տարի մեր դարդից է տանջվել, հիմա էլ՝ Գոհարի, բայց որ էսքան դիմացել է, թող մի օր էլ դիմանա: Մենք հիմա պիտի գնանք էն մարդագելի վիզը պոկենք, որ էլ մարդու միս չուտի, փոքր էրեխեքի արյուն չխմի: Էգուց առավոտ նոր քո ասածը կանենք:

Արսենի առաջարկը դուր եկավ եղբայրներին: Կապեցին իրենց զենքերը, նստեցին ձիերը, գնացին հասան մարդագելի տունը: Վեց եղբայրը շրջապատեցին տունը, իսկ Արսենը մտավ ներս: Տեսավ՝ մարդագելը քնած է, իսկ պառավը սանդերքը դրել, բուրդ է գզում:

- Նանի՛,- ասաց Արսենը,- մարդագելին արթնացրո՛ւ, բան ունեմ ասելու:

- Ա՛յ բալա, ի՞նչ ունես նրա հետ խոսելու,- ասաց պառավը: - Էն որ վեր կացավ, քեզ տեղնուտեղը կտոր-կտոր կանի, թոնրում կխորովի, կուտի: Մեղք ես, շուտ փախի՛ր էստեղից:

- Ոչինչ, նանի՛, դու վեր կացրու, ես նրան էնպես քնեցնեմ, որ էլ արևի երես չտեսնի:

Պառավը տեղից վեր կացավ, թոնրի վրայի շիկացած կրակ-խառնիչը վերցրեց, դրանով մարդագելի ոտնատակը դաղեց: Մարդագելը ոտքը քաշեց, աչքերը բացեց, տեսավ՝ մի ջահել տղա կանգնած է շեմին:

- Երկար ժամանակ է՝ մարդու միս չեմ կերել,- ասաց մարդագելը,- լավ է՝ իր ոտքով է եկել:

- Շատ մի՛ խոսիր,- ասաց Արսենը,- վե՛ր կաց տեղիցդ, հետդ հաշիվ ունեմ, վերջդ եկել է:

Մարդագելը տեղից վեր թռավ, բռնեց Արսենին, որ մտցնի թոնիրը, ողջ-ողջ խորովի, ուտի: Արսենը ուժեղ հրեց նրան, ազատվեց ձեռքից, դաշույնն էնպես վրա բերեց, որ մարդագելի աջ ձեռքը կտրեց գցեց: Մարդագելը մեկ էլ վրա պրծավ, որ ձախ ձեռքով բռնի տղային, էս անգամ Արսենը դաշույնը նրա կոկորդը խրեց: Մարդագելն էնպես գոռաց, որ թվաց, թե ամպերը որոտացին, կայծակը պայթեց:

Ձայնի վրա Արսենի եղբայրները ներս վազեցին, տեսան, որ մարդագելն արնաթաթախ մեկնվել է, Արսենն էլ սպասում է՝ տեսնի՝ չի՞ շարժվում, որ մեկ էլ զարկի: Դավիթն սկսեց մխիթարել պառավին.

- Ա՛յ նանի,- ասաց,- շատ էլ դարդ մի՛ արա, որ մարդագել-տղեդ սպանվեց: Մարդագելն ապրելու բան չէ: Դրա փեշակը մարդ ուտելն է: Մեր տասներկու տարեկան փոքր քրոջն է արնաքամ արել, որտեղ մարդ է տեսել, հարձակվել, մորթել կերել է: Ավելի լավ չէ՞, որ էդ տեսակը մեռնի:

Պառավը ոչինչ չասաց. միայն գլուխն էր տմբտմբացնում:

Մարդագելի տունը տակնուվրա արեցին, մի ձիաբեռ ոսկի հանեցին, տան եղած-չեղածը հավաքեցին, պառավին էլ հետները վերցրին, բերեցին իրենց տուն: Իրենց տան եղած-չեղածն էլ հավաքեցին, կապկպեցին, քրոջը նստեցրին մեծ եղբոր ձին, պառավին՝ մեկ ուրիշ ձի ու լուսադեմին ճամփա ընկան դեպի իրենց հայրական տուն:

Գյոզալը Գոհարին էնքան էր փնտրել, էնքան էր քայլել, էնքան էր արտասվել նրա համար, որ հալումաշ էր եղել, հիվանդացել, անկողին էր ընկել: Հարևաններն էին գալիս, ջուր տալիս նրան կամ մի ափսե տաք շորվա[7]:

Երբ Սաքիի յոթ որդիները բեռնած ձիերով մտան իրենց բակ, Գոհարը ցած թռավ ձիուց ու «նանի՜» կանչելով ընկավ մոր գիրկը:

- Տեսա՞ր, նանի,- ասաց նա,- տեսա՞ր, ոնց ախպերներիս գտա բերեցի: Դե, թող հիմա էլ ինձ ծաղրեն աղջիկները:

Գյոզալը գրկից բաց չէր թողնում Գոհարին, համբուրելուց չէր կշտանում, բայց աչքն էլ դռնից չէր կտրում, թե՝ ո՞ւր են որդիները: Քիչ անց յոթ եղբայրները հերթով մտան տուն: Մայրը քիչ էր մնում՝ ուրախությունից խենթանա. չգիտեր՝ որին գրկի, որին թողնի: Հիվանդությունից հետք էլ չմնաց: Վեր կացավ անկողնուց, հագնվեց, մարդագելի տնից բերած մեծ կաթսայով ճաշ եփեց, որ բոլորին հերիքի:

Մարդագայլի մոր համար տղաները տուն սարքեցին, ու նա իր տան եղած-չեղածը հավաքեց, գնաց էնտեղ ապրելու: Տասնչորս սենյականոց երկհարկանի մի նոր տուն էլ իրենց համար սարքեցին, հավաքվեցին էնտեղ: Վեց եղբայրներն ամուսնացան, սիրուն-սիրուն հարսներ բերեցին տուն, Գյոզալին ուրախացրին:

Միայն Արսենը հրաժարվեց ամուսնանալ:

- Գնալու եմ ողջ աշխարհը ոտքի տակ տամ, հորս գտնեմ, բերեմ տուն, նոր պսակվեմ,- ասաց նա: - Հայրս իմ հարսանիքին պիտի պարի:

Մի քանի օրից նա հարյուր ոսկի վերցրեց իր հետ, բոլորին համբուրեց, նստեց ձին ու գնաց հորը փնտրելու: Մի ողջ տարի

[7] Թանձր ապուր

արար աշխարհը ման եկավ, էլ երկիր չմնաց, որ չգնար: Որքան հարցուփորձ արեց, ոչ մեկին չհանդիպեց, որ Սաքիին տեսած լիներ: Գնաց հասավ Սպահան, էնտեղից՝ Արդաբիլ, հետո անցավ Խորասան: Մի տարի որոնելուց հետո հասավ Թախտաբազար, որտեղ էլ մի մարդու հանդիպեց, որն իրենց գյուղացի էր: Երբ ասաց, որ ինքը Սաքիի որդին է, մարդը շատ զարմացավ, նրա վիզը գրկեց, համբուրեց:

- Ա՛յ բալա, դուք ո՞ւր էիք, բա ձեր հերը մեղք չէ՞ր: Խեղճ մարդը, աշխարհով մեկ ընկած, ձեզ է ման գալիս: Հինգ տարի կլինի էն օրից, որ նրան տեսա Պարսկաստանի Արդաբիլ քաղաքում: Իր դարդերը պատմեց ինձ, ձեռքի փողն էլ պրծել էր, ինձնից փող ուզեց: Ես էլ երկու ոսկի տվեցի նրան, շատ շնորհակալ եղավ, համ էլ ասաց, որ մտադիր է Հնդկաստան գնալ: Դրանից հետո էլ չեմ տեսել:

Արսենը լսում ու լաց էր լինում հոր համար: Նա հինգ ոսկի հանեց գրպանից ու տվեց էդ մարդուն:

- Էս էլ իմ հոր պարտքը, ավելն էլ՝ աչքալուսանքի համար, որ իմ հոր մասին մի բան իմացա:

Էդ մարդուն հանդիպելուց հետո Արսենը բռնեց Հնդկաստանի ճանապարհը: Ողջ Հնդկաստանը ոտքի տակ տվեց, Կալկաթայում մի քանի հայի հանդիպեց, հարցուփորձ արեց: Ոչ ոք չէր լսել Սաքիի մասին: Մեկը խորհուրդ տվեց, թե՝ լավ կանես, գնաս Մադրաս, էնտեղ շատ հայեր կան, մեկ էլ տեսար՝ գտար:

Արսենը ձին քշեց, գնաց հասավ Մադրաս: Մի փողոցով անցնելիս տեսավ, որ մի ծեր, ճերմակամորուք մարդ բանջարանոց է մշակում: Ձին կանգնեցրեց: Սիրտն ասես վկայում էր, որ էդ մարդը հայ է: Արսենը ձեռքով կանչեց նրան: Մարդը մոտեցավ, հենվեց ցանկապատին:

- Ամի՛, դու հա՞յ ես,- հարցրեց Արսենը:

- Հա՛, բալա, հայ եմ, էստեղ մի փոր հացի համար եմ աշխատում:

Բա դու ո՞նց իմացար, որ հայ եմ, որտեղի՞ց ես…

- Ամի՛, անունդ ի՞նձ բաշխիր, ես հեռվից եմ եկել:

- Ա՛յ բալա, իմ անունը ինչի՞դ է պետք…Անունս Սաքի է: Քո անո՞ւնն ինչ է…

Արսենը, երբ լսեց հոր անունը, ուշադիր նայեց աչքերին, տեղնուտեղը ճանաչեց, ցանկապատի վրայով ցատկեց-անցավ, հոր ոտքերն ընկավ, համբուրեց:

- Ապի՛,- ասաց,- Արսենն եմ՝ քո փոքր որդին: Մի տարի է՝ աշխարհով մեկ ընկած՝ քեզ եմ փնտրում, վերջը գտա:

Սաքին ուրախությունից խոսել չէր կարողանում, արցունքը խեղդում էր նրան: Լաց էր լինում ու ասում՝ ես քեզ մատա՛ղ, բալա՛ ջան:

Արսենը մի ձի էլ հոր համար գնեց, ճանապարհ ընկան ու մի ամսում հասան տուն: Յոթ օր, յոթ գիշեր քեֆ արեցին, ուրախացան: Գյոզալի վեց հարսներն էլ երեխա էին ունեցել: Սաքին ու կինն արդեն վեց թոռան տեր էին դարձել:

Գյոզալն ամուսնուն մի ուրիշ լուր էլ հայտնեց, թե՝ բա չես ասի, մեր հարևան Մաքաղաթի մյուս աչքն էլ է քոռացել, ձեռքից բռնած են ման տալիս:

- Ա՛յ կնիկ,- ասաց Սաքին,- էլ բան ու գործ չունե՞ս: Մեղք է, թող Աստված նրան էլ օգնի, աչքին լույս տա:

Սաքին Արսենին էլ պսակեց, մի սիրուն հարս էլ նրա համար բերեց:

Բոլորն էլ հասան իրենց մուրազին: Որտեղ մի անճար մարդ կա, թող նա էլ հասնի իր մուրազին:

Իմաստուն բվեճը

Կար չկար՝ թռչունների մի խան կար, որը շատ պահանջկոտ, քմահաճ և փառատենչ կին ուներ: Այդ կինն ինչ ցանկանար՝ անում էր, իսկ խանը չէր համարձակվում առարկել նրան: Մի օր խանի կինը որոշեց թռչնի միս համտեսել: Խանը հրամայեց կատարել կնոջ ցանկությունը: Տարբեր թռչունների միս հրամցրին կնոջը, բոլորն էլ համտեսեց, բայց չգոհացավ կերածից.

– Հիմա էլ բվեճի միս եմ ուզում փորձել, ասաց նա ամուսնուն:

Խանն արագասլաց ճուռակին ուղարկեց, որ կանչի բվեճին: Ճուռակը գտավ բվեճին և նրան հայտնեց խանի հրամանը.

– Խանը կանչում է քեզ: Տիկինը որոշել է քո միսն էլ համտեսել:

Բվեճը մի քիչ մտածեց և ասաց.

– Ես ցերեկը թռչել չեմ կարողանում. աչքերս չեն տեսնում: Դու գնա, իսկ ես գիշերը կներկայանամ խանին:

– Ճուռակը հետ դարձավ, փոխանցեց խանին բվեճի խոսքերը: Գիշերն անցավ, ցերեկն էլ անցավ, իսկ բվեճը չկար ու չկար: Զայրացած կինն սկսեց գոռգոռալ ամուսնու վրա.

– Դու ի՞նչ խան ես, որ բվեճը քեզ չի ենթարկվում:

– Շուտով, շուտով, սիրելի՛ս, հանգստացրեց խանը կնոջը: Նա գիշերը կգա:

Բայց… Այդ գիշերն էլ անցավ, ցերեկն էլ, իսկ բվեճը չկար ու չկար: Խանի պալատում իրարանցում սկսվեց ու խառնաշփոթ: Ծառաները ծվծվում էին, վախենում տիրուհու աչքին երևալ. չես հասցնի աչքդ թարթել, մեկ էլ տեսար՝ կտցահարեց: Վերջապես երրորդ օրը ուշ գիշերով բվեճը ներկայացավ խանին: Մոլեգնած խանը հարցրեց զայրույթով.

– Հե՛յ, դո՛ւ, ապակե աչք, ինչպե՞ս հանդգնեցիր ժամանակին չներկայանալ:

– Առաջին գիշերը մի հավաքի մեջ հայտնվեցի, ի՛մ խան, ահա թե ինչու չկարողացա ներկայանալ, հանգիստ պատասխանեց բվեճը:

– Ի՞նչ հավաք, հարցրեց խանը, ի՞նչ հարց էին այնտեղ քննարկում:

– Վիճում էին, թե փոթորկից հետո ընկա՞ծ ծառերն են ավելի շատ լինում, թե՞ կանգուն մնացածները:

– Եվ որո՞նք են ավելի շատ՝ ընկածնե՞րը, թե՞ կանգունները, հետաքրքրվեց խանը:

– Ընկածներն ավելի շատ են, ի՛մ խան:

– Ինչո՞ւ, զարմացավ խանը:

– Որովհետև շատ ծառեր, ճիշտ է, չեն ընկնում, բայց ճկվում ու խոնարհվում են, և նրանք էլ են ընկած համարվում:

– Իսկ ինչո՞ւ երկրորդ գիշերը չներկայացար, դարձյալ մռայլվեց խանը:

– Մեկ ուրիշ հավաքի մեջ հայտնվեցի, ի՛մ խան, անվրդով պատասխանեց բվեճը:

– Այնտե՞ղ ինչ հարց էին քննարկում, հարցրեց խանը:

– Վիճում էին, թե տարվա մեջ ավելի շատ գիշե՞ր է լինում, թե՞ ցերեկ:

– Եվ...

– Եվ որոշեցին, որ ավելի շատ գիշեր է լինում:

– Ինչո՞ւ, հետաքրքրվեց խանը:

– Որովհետև ամպամած օրերին արևը չի երևում, և այդպիսի օրն էլ գիշեր է:

– Լավ, իսկ այս գիշե՞ր ինչու չներկայացար, հարցրեց խանը:

– Քո պալատի մեծ սրահից քիչ հեռու մեկ ուրիշ մեծ հավաքի մեջ հայտնվեցի, իմ խան, պատասխանեց բվեճը:

– Իսկ այնտեղ ինչո՞ւ էին հավաքվել, հետաքրքրվեց խանը:

– Վիճում էին, թե երկրի վրա տղամարդի՞կ են ավելի շատ, թե՞ կանայք: Որոշեցին, որ կանայք տղամարդկանցից շատ են:

– Ինչո՞ւ,– զարմացավ խանը:

– Որովհետև այն տղամարդիկ, որոնք կանանց հիմար քմահաճույքներն են կատարում, տղամարդ համարվել չեն կարող, ի՛մ խան, պատասխանեց բվեճը:

– Դա խաների՞ն էլ է վերաբերում:

– Իհարկե՛, վերաբերում է, ի՛մ խան, ասաց բվեճը և, ի նշան հնազանդության, փակեց իր բաժակակալների պես կլոր աչքերը:

Խանը ֆսֆսացրեց ու սկսեց մտածել. «Ես իզուր կնոջս կամքը կատարեցի և այդքան թռչուն կոտորեցի»:

Այդ օրվանից նա թռչուններ սպանելն արգելեց կնոջը, իսկ թռչուններն ուրախացան և իրենց շնորհակալությունը հայտնեցին իմաստուն բվեճին:

Վագրը, եղջերուն և աղվեսը

Մի անգամ վագրը զբոսնում էր բլրալանջին: Հանկարծ տեսավ, որ ծառերի տակ, կանաչ խոտերում արածում է մի փոքրիկ եղջերու: Եղջերուն նկատեց վագրին ու երկյուղից քար կտրեց: Փախչելու տեղ չկար: Այդ ժամանակ փոքրիկ եղջերուն սիրտ արեց և որոշեց խաբել վագրին: Նա գիտեր, որ այդ վագրը դեռ երբեք կենդանի եղջերու չի տեսել, դրա համար էլ այնպես ձևացրեց, թե իբր չի տեսնում վագրին: Շուռ եկավ և շարունակեց հանգիստ արածել:

Վագրը զարմացավ. ինչո՞ւ այդ տարօրինակ գազանը չի փախչում: Մոտեցավ ու հարցրեց.

- Ասացեք, սիրելիս, ինչի՞ համար են ձեր գլխի եղջյուրները:

Եղջերուն ժպտաց և պատասխանեց.

- Վագրերին պատառոտելու համար:

- Իսկ, ասացեք, ինչո՞ւ ձեր մեջքին ու կողքերին այդքան շատ սպիտակ բծեր կան,- նորից հարցրեց վագրը:

Եղջերուն պատասխանեց.

- Ամեն անգամ, երբ ես մի վագր եմ ուտում, ինձ վրա երևան է գալիս մի նոր, սպիտակ բիծ: Ես արդեն այնքան շատ վագր եմ կերել, որ այժմ բոլոր բծերը հաշվել չեմ կարող:

Այդ խոսքերը լսելով՝ վագրը վախեցավ ու փախավ:

Ճանապարհին հանդիպեց մի աղվեսի և պատմեց նրան իր սարսափի մասին: Աղվեսը ծիծաղեց:

- Փոքրիկ եղջերուն քեզ հետ չար կատակ է արել,- ասաց նա:

Բայց վագրը չէր հավատում՝ շարունակելով դողալ երկյուղից:

- Դե՛, եթե դու այդքան վախենում ես,- ասաց աղվեսը,- այդ դեպքում թույլ տուր բարձրանամ քո մեջքին, մենք միասին կգնանք փոքրիկ եղջերուի մոտ և ամեն ինչ կպարզենք:

Երբ փոքրիկ եղջերուն տեսավ նրանց, հասկացավ, որ աղվեսը վագրին պատմել է իսկությունը: Էլ ինչպե՞ս ազատվես:

Եվ նա հանկարծ գոռաց ամբողջ ձայնով.

- Շնորհակալ եմ քեզանից, սիրելի աղվես քույրիկ:

Երեկ դու խոստացար մի մեծ վագր բերել, այսօր տեսնում եմ, որ խոսքիդ տերն ես, այն էլ ճիշտ ճաշի ժամին:

Վագրը լսեց այդ խոսքը, մի ոստյուն գործեց և սկսեց փախչել ինչքան ուժ ուներ ոտքերում՝ խեղճ աղվեսին բերանն ասած:

Արծիվը աղավնատնում

– Վա՜հ, ի՞նչ է սա,– բացականչեց մայր աղավնին, երբ բարձրից ինչ-որ բան ընկավ իր բնի մեջ և քիչ մնաց ճյուղից ցած գցեր փոքրիկ Բիլին և Կուին, որոնք նստած մտածում էին՝ իրենք երբևէ կհամարձակվե՞ն թռչել, թե՞ ոչ:

– Մայրի՛կ, ինչ անճոռնի թռչուն է,– սարսափելի անծանոթին կլոր աչքերով նայելով՝ ասաց Բիլը՝ փոքրիկ աղավնիներից մեկը:

– Նա փետուրներ չունի և այնպես տխուր ու վախեցած է թվում: Շոյիր նրան, մայրի՛կ,– ղունղունաց Բիլի քույրիկը՝ փոքրիկ Կուն, որն անսահման բարի ձագուկ էր:

– Խեղճ պստիկ... Նա կարծես վնասված է և վախեցած, բայց այնքան մեծ է ու այնպես վայրի: Ամենևին նման չէ մյուս ձագուկներին: Նրան մոտենալն էլ սարսափելի է,– ասաց մայր աղավնին՝ վախեցած նայելով բնի մեջ:

Դա, իսկապես, տարօրինակ թռչնի ձագ էր: Տարիքով փոքր էր, բայց հազիվ էր տեղավորվել բնի մեջ ու թեև վնասվածքի պատճառով հազիվ էր շնչում, բայց համարձակ նայում էր բոլորին իր

ոսկեշող, փայլուն աչքերով, անհամբեր թափահարում էր թևերն ու բացուխուփ անում կեռ կտուցը՝ ասես պատրաստվելով ինչ-որ մեկին կտցահարել:

– Այս ճուտը քաղցած է,– ասաց Բիլը, որը հայտնի էր իր շատակերությամբ:

– Մայրիկ, ինձ համար բերած այն սիրունիկ հատապտուղը նրան տուր,– ասաց Կուն, որը միշտ պատրաստ էր օգնել մյուսներին:

Մայր աղավնին խոշոր, հասուն ելակը մոտեցրեց անծանոթին, բայց սա չցանկացավ ելակն ուտել և այնպես բարձր ու զայրագին ճչաց, որ քնքուշ աղավնիները դողդողացին իրենց վարդագույն տոտիկների վրա կանգնած:

– Ես թռչեմ բուի մոտ, խնդրեմ, որ գա, տեսնի մեր հյուրին, ասի՝ ինչ թռչուն է, ինչպես պիտի նրան խնամենք,– ասաց մայր աղավնին:

Նա Բիլին և Կուին զգուշորեն տեղափոխեց կողքի դատարկ բույնը և թռավ: Բիլն ու Կուն նստել էին անշարժ և հետաքրքրությամբ նայում էին անծանոթ թռչնի ձագին, որը ճչում էր, թափահարում թևերն ու իր շողշողացող աչքերով անդադար նայում շուրջը:

– Օ՜հ, սա արծվի ձագ է,– ասաց բուն, երբ տեսավ նրան:– Ճիշտ կանեք նրան հրեք, գցեք ցած, որովհետև, երբ մեծանա, կուտի ձեզ կամ, լավագույն դեպքում, կթռչի, կգնա և մտքով էլ չի անցնի շնորհակալություն հայտնել ձեր հոգածության համար:

– Ես չեմ կարողանա մեր տնից քշել խեղճ ձագին: Գուցե, մեզ մոտ պահելով ու գուրգուրելով, ես կարողանամ այնպես անել, որ նա սիրի մեզ ու երջանիկ զգա մեր կողքին: Իհարկե, հենց որ կարողանա ինքն իր կարիքները հոգալ, ես նրան ազատ կթողնեմ,– պատասխանեց մայր աղավնին բուին:

– Դա, իհարկե, միայն դուք կկարողանաք անել,– ասաց բուն,– բայց գիտեք, թե որքան դժվար է գիշատիչ թռչուններին հնազանդեցնելը: Իսկ արծիվները, գիտեք, չէ՞, սարսափելի գիշատիչներ

են: Սա թագավորական արծիվ է՝ բոլոր թռչուններից ամենագեղեցիկը: Նա, հավանաբար, ապրել է բարձր լեռներում: Թե ինչպես է այստեղ հայտնվել, գլխի չեմ ընկնում: Բայց դա արդեն եղել է. արծվիկը ձեզ մոտ է, նա քաղցած է, դեռ չի փետրավորվել, և դուք կարող եք նրա հետ վարվել այնպես, ինչպես որ ձեզ է հարմար: Բայց հիշեք՝ նրան պետք է կերակրել որդերով ու թրթուրներով, և, եթե հնարավոր է, սանձահարեք նրան:

Բուն թռավ գնաց: Նա տանել չէր կարողանում լույսը, բացի այդ, այլևս խոսելու ցանկություն չուներ, հատկապես որ, կարծում էր, թե աղավնին հիմարություն կանի, եթե արծվի ճտին պահի իր բնում:

– Թող հանգստանա մեզ մոտ, իսկ հետո դուրս արա մեր բնից,– ասաց Բիլը, որը զգուշավոր էր:

– Չէ՛, չէ՛, մայրիկ, թող մնա այստեղ: Սիրի՛ր նրան, խնամի՛ր ու դարձրո՛ւ բարի,– խնդրեց փոքրիկ Կուն:– Ես գիտեմ, նա մեզ չի նեղացնի:

– Կմտածեմ, սիրելիներս,– ասաց աղավնին,– բայց առայժմ պետք է նրան կերակրել:

Մայր աղավնին շատ բարի էր և խելացի, նաև հաստատուն բնավորություն ուներ: Երբ որոշում էր որևէ բան անել, երբեք որոշումից հետո չէր կանգնում: Նա թռավ գնաց և քիչ անց հետ եկավ՝ կտուցի մեջ մի հաստլիկ որդ բռնած: Արծվիկն արագ կուլ տվեց որդն ու սկսեց ճչալ՝ նորը պահանջելով: Մայր աղավնին ստիպված ինն անգամ գնաց ու եկավ, մինչև ճուտը կշտացավ: Իսկ երբ կշտացավ, գլուխը մտցրեց թևի տակ ու քնեց մի ամբողջ ժամ: Արթնացավ առույգ, լավ տրամադրությամբ և սկսեց խոսել: Նրա ձայնը սուր էր ու կտրուկ, ամենևին նման չէր աղավնիների քնքուշ ղունղունոցին:

– Ի՞նչ է անունդ, թանկագինս,– հարցրեց մայր աղավնին:

– Իմ անունը Ոսկի Աչք է, բայց հայրիկս ինձ պարզապես Ոսկի է ասում:

– Իսկ որտեղ էիր ապրում:

– Հեռու–հեռու լեռներում՝ ամպերի մեջ, իսկ մեր բույնը սրանից շատ ու շատ մեծ է:

– Իսկ ինչու՞ հեռացար այնտեղից, անուշս:

– Մայրս մահացավ, և երբ հայրս նրան տարավ ձյուների մեջ թաղելու, չար բազեն ինձ փախցրեց, բայց ես այնքան կտցահարեցի նրան, որ ցած գցեց ինձ: Ես էլ հայտնվեցի այստեղ:

– Ինչ տխուր պատմություն է,– հոգոց հանեց մայր աղավնին:

Բիլն արագ դեսուդեն նայեց՝ մոտակայքում չար բազե չկա՞ արդյոք, իսկ Կուն ձախ թևիկով սրբեց արցունքը, ցատկելով մոտեցավ մորն ու խնդրեց.

– Խնդրում եմ, մայրի՛կ, թող Ոսկին մնա այստեղ: Չէ՞ որ նա մայրիկ չունի և չի կարողանա վերադառնալ իր տուն: Մենք նրան շատ կսիրենք, և նրան դուր կգա մեզ հետ ապրելը:

– Այո՛, սիրելի՛ս, ես առանց վախենալու կպահեմ նրան: Արծիվներն ազնվազարմ թռչուններ են, և եթե մենք լավ վերաբերվենք արծվիկին, նրա ընտանիքը գուցե, հանուն մեզ, խնայի շատ ու շատ փոքրիկ թռչունների:

– Ես սիրով կմնամ այստեղ, մինչև թռչել սովորեմ և կասեմ իմ ազգակիցներին, որ ձեզ չվնասեն, որովհետև դուք շատ բարի եք, և ես ձեզ սիրում եմ,– ասաց Ոսկի Աչքը և ձգվեց ու կտուցով համբուրեց մայր աղավնուն: Արծվիկին շատ դուր եկավ, որ նա այդպիսի լավ խոսքեր ասաց իր ցեղակիցների մասին: Նրան նաև հուզեցին իր նոր ծանոթների մեղմությունն ու հեզությունը: Անտառի թռչունները հերթով գալիս էին՝ տեսնելու մայր աղավնու նոր ձագին, և բոլորը միաձայն պնդում էին, որ նա շատ հոգս կպատճառի իր ներկայությամբ: Մայր աղավնին ինքն էլ հասկանում էր, որ Ոսկի Աչքի հետ ապրելը դժվար կլինի: Բայց նա դուրս չարեց արծվիկին, պահեց ու գուրգուրեց նրան: Չնայած Ոսկին հաճախ էր հուսահատեցնում իր համառությամբ և կտրուկ բնավորությամբ, բայց մայր

աղավնին իսկապես սիրում էր իր խորթ ձագին և հավատում էր, որ վաղ թե ուշ համբերատարության ու սիրո շնորհիվ արծվիկի բնավորությունը կմեղմանա:

Իր հարազատ ձագերն իրեն ընդհանրապես հոգս չէին պատճառում: Մեկ-մեկ Բիլն էր փորձում ինքնագլուխ ինչ-որ բաներ անել, բայց բավական էր մայրն ասեր՝ «Որդի՛ս, այնպես արա, ինչպես ես ասացի, որովհետև այդպես ինձ հաճելի կլինի», և Բիլը տեղնուտեղը զիջում էր: Իսկ փոքրիկ Կուին մոր մի հայացքն էլ բավական էր նրան հասկանալու համար: Բայց, Տե՛ր Աստված, որքա՜ն շատ հոգս էր պատճառում Ոսկին: Եթե նրան չէին տալիս այն, ինչ ուզում էր, նա այնպես էր ճչում, այնպես էր կտցում, պահանջում, կռվում: Եթե նրան դուր չէր գալիս ուտելիքը, ցած էր գցում, ժամերով ուռած-փքված նստում: Հաճախ ծաղրում էր Բիլին և Կուին, ուրիշ թռչունների մոտ իրեն երևակայում էր, ասում էր, որ ինքը ոչ թե սովորական, այլ թագավորական արծիվ է, որ մի օր ինքը կհեռանա այդտեղից, կգնա իր արքա հոր հետ ապրելու ամպերի մեջ, ուր մյուսները երբեք չեն հասնի: Բայց, չնայած այդ ամենին, անտառի թևավոր բնակիչները սիրում էին Ոսկի Աչքին, որովհետև նա նաև շատ լավ հատկանիշներ ուներ: Արծվիկը խղճում ու պաշտպանում էր թույլերին, մեծահոգի էր, կարողանում էր առանց ափսոսալու հրաժարվել իրեն պատկանող կերից, եթե դա պետք էր մեկ ուրիշին օգնելու համար: Երբ տրամադրությունը բարձր էր լինում, հպարտ նստում էր, շուրջը հավաքում փոքրիկ աղավնիներին ու նրանց ընկերներին և հեքիաթներ էր պատմում, իսկ փոքրիկները հիացած նայում էին նրան ու լսում:

Աղավնու բնում ապրելու ընթացքում Ոսկին շատ էր գեղեցկացել. աղվամազի փոխարեն գեղեցիկ փետուրներ էին հայտնվել, ոսկեշող աչքերի փայլն ավելի էր պայծառացել, սովորել էր խոսել մեղմ ձայնով և ավելի հազվադեպ էր ճչում. չէ՞ որ արծիվներն այդպես սուր ճչում են միայն այն պատճառով, որ բարձր լեռներում,

մոլեգնող քամիների և ամպերի անընդհատ բախումների մեջ լսեն միմյանց:

Երբ Ոսկին ընկել էր, հիշում եք իհարկե, որ վնասել էր թևը: Մայր աղավնին խաղողի վազի թելիկով կապել էր այն, որպեսզի հանկարծ շարժվելիս վնասվածքը ցավ չտա, թևը չթուլանա: Ոսկի Աչքի մի թևը վաղուց արդեն ամրացել էր, և կարողանում էր թափահարել, բայց մյուս թևը դեռ կապված էր: Մայր աղավնին կապը դիտավորյալ չէր հանում, որովհետև չէր ուզում, որ Ոսկին իրենցից շուտ հեռանա: Իսկ արծիվը, չնայած շատ էր կարոտել հորը, անսահման սիրել էր իր նոր ընտանիքն ու երջանիկ էր:

Մի անգամ, երբ Ոսկի Աչքը մենակ նստած էր սոճու վրա, նրան տեսավ ուրուրը, որը շատ զարմացավ՝ արծվի ձագին այդ կողմերում տեսնելով: Ուրուրն իջավ, նստեց նրա մոտ և հարցրեց, թե ինչ է անում այդտեղ: Ոսկին պատմեց իր պատմությունը: Նրան մինչև վերջ լսելով՝ ուրուրը ծաղրանքով ասաց.

– Հիմա՛ր թռչուն, պոկիր թևիցդ կապը և արի ինձ հետ: Ես կօգնեմ քեզ գտնելու հորդ:

Այս խոսքերն անհասկանալի տագնապով ու հուզմունքով լցրին արծվի սիրտը, իսկ երբ ուրուրն իր ամուր կտուցով պոկեց թևի կապը, Ոսկի Աչքը թափահարեց թևերն ու զգաց, որ դրանք հուսալի են և առողջ, ու ուրախության ճիչերով բարձրացավ վեր: Նա սկսեց ճախրել օդում, լայն շրջաններ գծել, փորձեց թևերն անշարժ պահելով օդում մնալ, բարձրանալ ու իջնել այնպես, ինչպես անում են արծիվները: Ուրուրը նրան խորհուրդներ էր տալիս, գովում էր, սիրաշահում՝ հուսալով ջահել արծվին խաբեությամբ իր բույնը տանել, իսկ հետո գտնել նրա հորը և, որդուն վերադարձնելով, նրա բարեհաճությանն արժանանալ: Մայր աղավնին, Բիլը և Կուն վերադարձան տուն և տեսան, որ բույնը դատարկ է: Նրանք անհանգստացան, իրար անցան: Կանեփահավն ասաց, որ Ոսկին թռել գնացել է ուրուրի հետ:

– Ի՞նչ էի ասում ձեզ,– ճչաց բուն՝ խորիմաստորեն տմբտմբացնելով կլոր գլուխը: Ձեր բարությունը չգնահատվեց, ձեր ջանքերը ջուրն ընկան: Ես վստահ եմ, որ այդ երախտամոռին դուք այլևս չեք տեսնի:

Վարդագույն թևիկով սրբելով աչքից ընկնող արցունքը՝ մայր աղավնին հեզորեն ասաց.

– Չէ՛, թանկագինս, սերն ու հոգատարությունը զուր չեն կորչում: Եթե նույնիսկ երբեք չվերադառնա Ոսկին, ես չեմ զղջա այն բանի համար, որ մայրություն եմ արել նրան: Ես վստահ եմ, որ նա մեզ երբեք չի մոռանա և կդառնա ավելի բարի ու քնքշասիրտ, որովհետև ապրել է աղավնու բնում:

Կուն սկսեց մխիթարել մորը, իսկ Բիլը ցատկեց սոճու ամենավերևի ճյուղին՝ հուսալով տեսնել արծվին:

– Ինձ թվում է՝ տեսնում եմ նրան, տեսնում եմ, թե ինչպես է հեռանում մեր Ոսկի Աչքը չար ուրուրի հետ,– ճչաց նա:– Ափսո՜ս, որ այդքան վտանգավոր ընկեր է գտել իր համար: Ուրուրը նրան միայն հիմար ու չար բաներ կսովորեցնի, գուցե նույնիսկ վնասի, եթե Ոսկի Աչքը չլսի իրեն:

Եվ Բիլը ձգեց իր պստլիկ տոտիկները, որպեսզի ավելի լավ տեսնի բարձր ու կապույտ երկնքում երևացող երկու սև կետերը:

– Եկեք միասին ձայն տանք, կանչենք, երգենք, սուլենք: Գուցե մեր ձայնը հասնի իմ Ոսկի Աչքին, և նա վերադառնա: Ես գիտեմ՝ նա մեզ սիրում է. չնայած շատ է հպարտ ու ինքնասածի, բայց անսահման բարի է,– ասաց մայր աղավնին ու սկսեց բարձր ղունղունալ: Բոլոր թռչունները միացան նրան. մեկը երգում էր, մյուսը՝ սուլում, երրորդը՝ ճչում: Ամբողջ անտառը լցվեց տարօրինակ երգչախմբի այս անսովոր երգով, որի ելևէջները բարձրացան վեր, ավելի վեր, և շուտով դրա թույլ արձագանքը հասավ այն ամպին, որի մեջ լողում էր Ոսկի Աչքը՝ աշխատելով ուղիղ արևին նայել: Նա արդեն հոգնել էր: Ուրուրը զայրանում էր նրա վրա, որովհետև

Ոսկին չէր համաձայնում նրա հետ իր բույնը գնալ, այլ ուզում էր որքան հնարավոր է շուտ գտնել հորը: Ուրուրն սկսեց հարվածել արծվին կտուցով, հայհոյել: Եվ ահա, երբ անտառի թռչունների երգը հասավ Ոսկի Աչքին, նրան թվաց, թե լսում է. «Տո՛ւն վերադարձիր, սիրելի՛ս, վերադարձի՛ր մեզ մոտ: Սպասո՛ւմ ենք քեզ, սպասում ենք...»: Ասես մի ուժ ստիպեց արծվին արագ դեպի ցած սլանալ: Ուրուրը չհամարձակվեց հետևել նրան, որովհետև տեսավ այն մարդուն, որը հրացանը ձեռքին հետուառաջ էր անում իր հողատարածքում և սպասում էր, թե երբ է ցած իջնելու գող ուրուրը, որն արդեն որերորդ հավի ճուտիկն էր իրենից փախցրել:

Ոսկին ուրախ էր, որ ազատվեց ուրուրից, և երջանիկ էր, երբ վայրէջք կատարեց իրեն ծանոթ ու սիրելի ճյուղին, որտեղ այնքան ուրախ դիմավորեցին իրեն:

– Ես այդպես էլ գիտեի, որ իմ սիրելին առանց հրաժեշտ տալու չի հեռանա մեզնից,– ղունղունաց մայր աղավնին՝ քնքշորեն ուղղելով ջահել արծվի գզգզված փետուրները:

– Մայրի՛կ, ինձ թվում է, որ դու ոչ միայն իմ թևն էիր կապել, այլև իմ սիրտն ես գամել մեր բնին,– ասաց Ոսկին՝ ավելի մոտենալով այն փոքրիկ ճերմակ կրծքին, որն այնքան մեծ սիրով էր լցված իր հանդեպ:– Ես կգնամ ու կվերադառնամ, խոստանում եմ, կպատմեմ այն ամենը, ինչ կպատահի իմ կյանքում: Իսկ երբ գտնեմ հորս, առանց ձեզ հրաժեշտ տալու չեմ վերադառնա նրա մոտ:

Ոսկի Աչքը մնաց աղավնու ընտանիքում, ավելի մեծացավ, ամրացավ ու գեղեցկացավ: Նրա գլխին ոսկեգույն փետուրներ հայտնվեցին, աչքերի փայլն ավելի պայծառ էր դարձել, ասես իսկական ոսկե շողեր էին ցայտում դրանցից, իսկ հզոր թևերն առանց դժվարության նրան բարձրացնում էին վեր, և նա արևին էր նայում ուղիղ՝ առանց աչքը թարթելու: Ոսկի Աչքն իսկական արծիվ էր դարձել՝ անվախ, հպարտ ու չքնաղ: Նա առաջվա պես սիրում էր փոքրիկ ու քնքուշ աղավնիներին: Հեռուներից վերա-

դառնալով՝ նստում էր ծանոթ ճյուղին և պատմում իր ընկերներին այն ամենի մասին, ինչ տեսնում էր կանաչ երկրի վրա ու կապույտ երկնքում: Աղավնիներին ու անտառի մյուս թռչուններին երբեք չէին ձանձրացնում արծվի պատմությունները: Նրանք նստում էին լուռ և կլորիկ աչքերը հառում էին Ոսկի Աչքի հպարտ դեմքին: Բոլորը հիանում էին նրանով և շատ սիրում, որովհետև, չնայած ուժին, արծիվը երբեք չէր նեղացնում իրենց, իսկ երբ անտառին էր մոտենում ուրուրը, քշում էր նրան՝ պաշտպանելով փոքրիկ թռչուններին: Բոլորը Ոսկի Աչքին «անտառի արքայազն» էին անվանում և երազում էին, որ նա միշտ մնար անտառում:

Բայց Ոսկին ավելի ու ավելի հաճախ էր թախծում, կարոտում հորը, բարձր լեռներում մնացած իր տունը: Եվ որքան մեծանում էր, այնքան ավելի ու ավելի էր մեծանում նրա կարոտը: Չէ՞ որ նա ուրիշ կյանքի համար էր ծնված՝ լեռների և արագասլաց ամպերի մեջ ապրելն էր նրանը, մրրիկների ու կայծակների հետ կռվելը: Բայց իր թախիծը հպարտ արծիվը թաքցնում էր բոլորից:

Մի անգամ Ոսկի Աչքը շա՛տ-շատ բարձր թևեց ու վայրէջք կատարեց մի ժայռի վրա, որ հանգստանա: Հանկարծ իրենից քիչ հեռու մի հսկա արծիվ տեսավ, որն իր սրատես աչքերով ուշադիր ցած էր նայում. ասես ինչ-որ բան էր փնտրում: Ոսկին կյանքում չէր տեսել այդքան վեհաշուք մեկ ուրիշ արարածի և որոշեց խոսել նրա հետ: Ծեր արծիվը հետաքրքրությամբ լսում էր երիտասարդ արծվին և, չթողնելով, որ նա խոսքն ավարտի, հուզված գոչեց.

– Դու իմ կորած որդին ես: Որքա՛ն եմ փնտրել քեզ, որքա՛ն հաճախ մտածել եմ, որ դու չկաս արդեն: Ողջո՛ւյն քեզ, իմ քա՛ջ զավակ, օդի՛ արքայազն, իմ սրտի ուրախություն:

Ծեր արծվի հսկա թևերը գրկեցին գտնված որդուն, ոսկեգույն փետուրները սեղմվեցին Ոսկի Աչքի կրծքին: Հոր շողշողուն աչքերն ասես գուրգուրում էին նրան: Ծեր արքան երկա՛ր-երկար պատմում էր իր որդուն նրա գեղեցկուհի մոր, իր նոր տան մասին,

ընկերների մասին, որոնք սպասում են նրան, որ ծանոթացնեն լեռների ազատ կյանքին: Երիտասարդ արծիվը հիացմունքով էր լսում հորը, բայց երբ ծեր արծիվն ասաց, որ ժամանակն է թռչելու, Ոսկի Աչքը մեղմորեն, բայց հաստատուն ձայնով ասաց.

– Չէ՛, հայրիկ, ես նախ պետք է հրաժեշտ տամ այն բարի ու քնքուշ թռչուններին, որոնք այսքան ժամանակ խնամել են ինձ, հոգ են տարել իմ մասին, երբ ես խեղճ, անօգնական ու չարացած էի: Ես խոստացել եմ, որ առանց հրաժեշտ տալու չեմ հեռանա և չեմ ուզում վշտացնել նրանց: Չեմ կարողանա գալ հետդ, քանի դեռ նրանց չեմ ասել, որ քեզ գտել եմ ու երջանիկ եմ դրա համար և քանի դեռ ինձ արած ամեն ինչի համար չեմ հայտնել երախտագիտությունս:

– Այո՛, դու պարտավոր ես դա անել, որդի՛ս,– ասաց ծեր արծիվը:– Իմ կողմից էլ շնորհակալություն հայտնիր և աղավնուն տուր այս փետուրն ու ասա, որ ոչ մի թռչող արարած չի համարձակվի նրան վնասել, քանի դեռ ինքն ունի արքայական այս նվերը: Շտապի՛ր, որդի՛ս, և շո՛ւտ վերադարձիր, որովհետև ես այլևս չեմ կարողանա քեզնից երկար ժամանակով բաժանվել:

Ոսկի Աչքն իջավ սոճու ճյուղին և ամեն ինչ պատմեց ընկերներին: Չնայած մոտալուտ բաժանման մտքից նրանք տխրեցին, բայց, իհարկե, հասկանում էին, որ ճիշտը դա է, որ Ոսկի Աչքի իսկական տեղն իր արքա հոր կողքին է: Բացի այդ, իրենցից շատերն էլ պատրաստվում էին չվել տաք երկրներ և, միևնույն է, պետք է բաժանվեին իրարից, որովհետև արծիվները չեն վախենում քամուց, փոթորկից ու ձյունից և չեն չվում տաք երկրներ:

Երբ Ոսկի Աչքը պատրաստվեց հեռանալ, բոլորն էլ հավաքվեցին նրան հրաժեշտ տալու: Մայր աղավնին շատ էր հպարտանում իրեն տրված արքայական ոսկե փետուրով: Բիլը և Կուն իրենց առյուծի պես հզոր զգացին, երբ մայրը փետուրը դրոշի պես ամրացրեց իրենց բնին: Արքայից այդպիսի նվեր ունենալը մեծ պա-

տիվ էր: Անտառը լցվեց հրաժեշտի համերգի հնչյուններով: Ով կարողանում էր թեկուզ մի քիչ երգել, երգում էր: Նույնիսկ բուն կյանքում առաջին անգամ երգեց, համերգին միացան մոծակները՝ իրենց բզզոցով, լուսատտիկները՝ իրենց տարօրինակ ճտճտոցով: Բայց պետք էր բաժանվել: Ոսկի Աչքը թափահարեց թևերն ու բարձրացավ վեր: Նա ավելի ու ավելի էր բարձրանում կապույտ լազուրի մեջ՝ թևի տակ զգալով սպիտակ փետուրից իրեն հասնող քնքշությունը. սպիտակ փետուրը մայր աղավնու հրաժեշտի նվերն էր իր սիրելիին:

Հեզ ու մեղմ թռչունի դասերն ամբողջ կյանքում օգնեցին Ոսկի Աչքին. նա կարողանում էր սանձել իր զայրույթը և լինել միաժամանակ մեղմ ու իշխող, համառ ու զիջող, արքա և ընկեր: Եվ ճիշտ են ասում, որ նա ոսկեշող աչքերն արևին երբևէ հառած ամենավեհանձն և ազնվազարմ արծիվն էր:

Գայլն ու պախրան[1]

Մի բազե ծառի վրա բույն է դնում, ճտեր հանում: Գայլը գնում, ասում է.

- Ճտերիցդ մեկը ցա՛ծ գցիր:

- Քեզ համա՛ր եմ պահել, մեծացրել,- ասում է բազեն,- ինչո՞ւ պիտի ցած գցեմ:

Գայլն ատամներով կրծոտում է ծառի բունը, ծառը շրջում, գցում է իր գլխին: Մի պախրա անցնում է էդ կողմով: Գայլը խնդրում է նրան.

- Արի մի ճա՛ր արա, ինձ ազատի՛ր, ես քեզ մեծ լավություն կանեմ:

Պախրան եղջյուրներն ընկած ծառի տակ է մտցնում, մի քիչ բարձրացնում, և գայլն ազատվում է: Պախրան ուզում է ճանապարհը շարունակել, բայց գայլն ասում է.

- Սպասի՛ր, քեզ թաքուն բան պիտի ասեմ:

Հետո մոտենում է պախրային ու ասում.

[1] Եղջերու, այծյամ

- Գիտեմ, որ քեզ ուտելու եմ:

Պախրան թե՝ քեզ ազատել եմ, որ ինձ ուտեմ, էդ է քո լավությունը:

Գայլը թե՝ չէ՛ որ չէ՛, պիտի քեզ ուտեմ:

- Լա՛վ,- ասում է պախրան,- որ էդպես է, արի գնանք մի քանիսին էլ հարցնենք, տեսնենք՝ ինչ կասեն, հետո ինձ կուտես:

Ճանապարհ են ընկնում: Ահագին գնում են ու հանդիպում աղվեսին: Պախրան հարցնում է.

- Բա էս կա՞րգ է. ես իրեն ծառի տակից դուրս հանեմ, ինքը թե՝ քեզ ուտում եմ:

Աղվեսը թե՝ գնա՛, կորի՛ր, դու ի՞նչ ես, որ գայլ ազատես: Ձեր ցեղն էդպես է, բոլորիդ պետք է կոտորել:

Պախրան գայլին ասում է.

- Գնանք ուրիշի էլ հարցնենք, տեսնենք՝ ի՞նչ են ասում:

Ճանապարհ են ընկնում: Մի քիչ էլ գնում են ու հանդիպում արջին: Պախրան պատմում է եղածը, արջն ասում է.

- Չէ՛, դու չես կարող գայլ ազատել:

Արջը գայլին էլ է հարցնում, թե ինչ է եղել, գայլն ասում է.

- Սուտ է ասում. սա ի՞նչ ուժ ունի, որ կարողանա ծառը տեղից բարձրացնել, ինձ էլ ազատել:

Արջը գայլին ասում է.

- Ձենդ կտրի՛ր, դու էլ ճիշտ չես խոսում: Գնանք տեսնենք՝ էդ ի՞նչ ծառ է:

Գնում են, հասնում ծառին: Արջը գայլին ասում է.

- Հապա, մտի՛ր ծառի տակ, տեսնենք՝ պախրան քեզ կարողանո՞ւմ է տակից հանել, թե՞ չէ:

Ծառը բարձրացնում են, գայլը մտնում է տակը: Արջը գայլին ասում է.

- Քո տեղը հենց էդ է, որ կա. էլ էդտեղից դուրս չգա՛ս:

Հետո դառնում է պախրային, թե՝ գայլի գործին էլ չխառնվես:

Հիմար վագրի հեքիաթը

Մթին անտառում ապրում էր մի ծեր, խելացի վագր: Երբ հասնում է նրա մահվան ժամը, կանչում է իր որդուն և հարցնում.

– Ասա՛ ինձ, ո՞ւմ ժանիքներն են ամենամեծը:

– Վագրինը,– պատասխանում է որդին:

– Ճիշտ է: Իսկ ո՞ւմ ճիրաններն են ամենասուրը:

– Նույնպես վագրինը:

– Այդ էլ ճիշտ է: Իսկ ո՞վ է ամենից արագ վազում և ամենից բարձր ցատկում:

– Վագրը,– առանց երկար մտածելու կրկնում է որդին:

– Դե, ուրեմն, պատասխանիր իմ վերջին հարցին. ո՞վ է աշխարհիս երեսին ամենաուժեղը:

– Ամենաուժեղը նա է, ում ժանիքներն ամենամեծն են, ճիրանները՝ ամենասուրը, և ով ամենից ավելի արագ է վազում և ամենից բարձր ցատկում: Ամենից ուժեղը վագրն է:

Մեռնող հայրը հառաչում է:

– Մի ժամանակ ես էլ այդպես էի կարծում,– ասում է նա:

– Բայց հիմա գիտեմ, որ ամենաուժեղը մարդն է: Լսի՛ր ինձ, զավակս: Վախեցիր մարդուց, թաքնվիր նրանից, աշխատիր չհանդիպել նրան և կռվի մի՛ բռնվիր նրա հետ: Մարդը վագրից ուժեղ է:

Այսպես է ասում հայր վագրը և մեռնում:

Ջահել վագրը մտքի մեջ է ընկնում. «Օ՜, ուրեմն որքա՜ն սարսափելի պիտի լինեն մարդու ժանիքները, եթե նա վագրից էլ ուժեղ է: Եվ ճիրաններն էլ երևի շատ մե՜ծ–մեծ են: Շատ կուզենայի գոնե հեռվից տեսնել մարդուն: Միայն թե պետք է իմանալ՝ որտեղ է ապրում նա»:

Այսպես մտածելով՝ վագրը գնում է մարդուն գտնելու: Գնում է, գնում, լեռներում հանդիպում է մի յակի:

«Երևի հենց սա է մարդը, մտածում է վագրը:– Միայն թե սա ճիրաններ չունի, ժանիքներն էլ չեն երևում: Ինչ–որ է, մի հարցնեմ՝ սա՞ է մարդը»:

Եվ հեռվից հարցնում է.

– Ասա տեսնեմ, դու մարդ չե՞ս:

Յակը զարմանում է.

– Ի՞նչ մարդ: Ես մի սովորական յակ եմ:

– Իսկ դու երբևէ մարդ տեսե՞լ ես:

– Իհարկե, տեսել եմ, այն էլ քանի՛ անգամ:

– Ճի՞շտ է, որ մարդն ավելի մեծ ժանիքներ ու ճիրաններ ունի, քան ես:

– Ինչե՞ր ես ասում: Մարդը ո՛չ ժանիքներ ունի, ո՛չ ճիրաններ:

– Ինչպե՞ս թե չունի,– զարմանում է վագրը: Նշանակում է՝ նրա թաթե՞րն են շատ ուժեղ, եթե վագրը չի կարող նրան հաղթել:

Մարդու թաթերը շատ թույլ են: Մարդը թաթի հարվածով նույնիսկ գայլ սպանել չի կարող:

– Սուտ ես խոսում,– բարկանում է վագրը:– Իմ հայրն ասում

էր, որ մարդը բոլոր գազաններից ուժեղ է: Ես կգնամ, ուրիշին կհարցնեմ մարդու մասին:

Եվ վագրը շարունակում է որոնել մարդուն: Գնում է, գնում, հանդիպում է ուղտին:

«Օհո՛, այս ինչ մեծ գազան է,– մտածում է վագրը:– Երևում է հենց սա է մարդը»:

Եվ ապահովության համար խիտ թփերի մեջ թաքնվելով՝ վագրը ձայն է տալիս ուղտին.

– Էհեյ, ասա տեսնեմ, դու մարդը չե՞ս:

– Ի՞նչ ես ասում,– զարմանում է ուղտը:– Ես ամենևին նման չեմ մարդու:

– Իսկ դու երբևէ մարդ տեսե՞լ ես:

– Ե՞ս տեսած չլինեմ մարդուն,– գոչում է ուղտը:– Տասը տարի նա իմ սապատին նստած քշում է, և ես գիշեր–ցերեկ, ամեն եղանակի ծառայում եմ նրան:

– Նշանակում է՝ մարդը քեզնի՞ց էլ մեծ է,– զարմանում է վագրը:

– Չէ՛,– գլուխն օրորում է ուղտը:– Մարդը բոլորովին փոքր է: Նրան իմ մեջքին նստեցնելու համար ես ստիպված եմ լինում չոքել:

– Դե՛, ուրեմն նա երևի շատ հաստ կաշի ունի, եթե վագրի ժանիքներից ու ճիրաններից չի վախենում:

– Կարող եմ քեզ ասել, որ բոլոր կենդանիների մեջ մարդու կաշին ամենանուրբն է: Դու չես հավատա, եթե ասեմ, որ նույնիսկ մոծակի կծելուց նա քորվում է:

«Այդ ինչպե՞ս,– մտածում է վագրը:– Նշանակում է՝ իմ հանգուցյալ հայրը ինձ ճիշտ չի ասել: Երևի նա երբեք մարդուն չէր էլ տեսել: Բանից դուրս է գալիս, որ մարդն ամենևին էլ սարսափելի գազան չէ»:

Եվ վագրը որոշում է՝ ինչ էլ լինի, գտնել մարդուն և ուտել նրան:

Շատ է թափառում նա լեռներում ու անտառներում, մինչև որ մի օր ինչ–որ թխկոց է լսում անտառի եզրին: Փայտահատն էր. մի ծառ էր կտրում:

Վագրը մի ոստյունով ցատկում ու կանգնում է մարդու առաջ:

«Ի՜նչ ծիծաղելի գազան է,– մտածում է վագրը:– Սա ոչ ժանիքներ ունի, ոչ ճիրաններ, նույնիսկ կաշի չունի»:

– Լսի՛ր,– ասում է վագրը, ես քեզ նման գազան երբեք չեմ տեսել: Ուղղակի զարմանալի է, որ մինչև հիմա գայլերն ու արջերը քեզ չեն կերել անտառում:

Բայց ես գազան չեմ, դրա համար էլ ինձ չեն կերել, – ասում է մարդը:

– Հապա ի՞նչ ես դու, եթե գազան չես,– հարցնում է վագրը:

– Մի՞թե չես տեսնում: Ես մարդ եմ:

– Մա՞րդ,– զարմանում է վագրը:– Ա՛յ թե ինչպիսին ես դու: Իսկ իմ հիմար հայրը քեզնից վախենում էր:

– Քո հայրը խելացի վագր է եղել, եթե մարդուց վախենում էր, ասում է փայտահատը:

– Հիմա մենք կիմանանք՝ ով է ավելի խելացի. ե՞ս, թե՞ իմ հայրը: Արեգակը դեռ լեռան հետևը չանցած՝ ես քեզ կուտեմ:

– Ա՛խ, պարո՛ն վագր,– ասում է մարդը, մեռնելուց առաջ ես կուզենայի քեզ ցույց տալ, թե ինչեր կարող եմ շինել ես: Արի տես, թե ինչպիսի որջ եմ պատրաստել ինձ համար:

– Դե ցույց տուր, միայն թե շուտ,– ասում է վագրը:– Ես շատ քաղցած եմ: Առաջ անցիր, ես քո հետևից կգամ:

Փայտահատն արագ–արագ քայլում է դեպի իր խրճիթը, իսկ վագրը գնում է նրա հետևից ու մռթմռթում:

– Իմ հայրը վախկոտ է եղել, որ այսպիսի բզեզից վախեցել է:

Փայտահատը մոտենում է իր քարաշեն տնակին:

– Սա ի՞նչ է,– հարցնում է վագրը:

– Սա իմ որջն է,– ասում է փայտահատը:– Սրա մեջ ապրելը շատ հարմար է. ինձ անձրևը չի թրջում, և ես ոչ շոգից եմ վախենում, ոչ ձյունից:

– Ա՜խ, այդպե՞ս,– ուրախանում է վագրը:– Ուրեմն սա քո որջն

է, և քեզ ուտելուց հետո ես սրա մեջ կտեղավորվեմ:

– Բայց դու չգիտես, թե ինչպես են բացում ու ծածկում դուռը,– ասում է մարդը:– Արի, ես քեզ ցույց տամ:

Փայտահատը տուն է մտնում, դուռը ծածկում և ճեղքից ձայն է տալիս վագրին.

– Դե՛, հիմա փորձի՛ր ինձ բռնել:

Վագրը թաթով խփում է դռանը, բայց դուռն ամուր էր, չի բացվում:

– Ա՛յ, տեսնո՞ւմ ես՝ ինչ լավ որջ ունեմ ես,– ասում է փայտահատը: Սրա մեջ ես ոչ ոքից չեմ վախենում, նույնիսկ՝ քեզնից:

Այս ասելով՝ մարդը դուռը բացում և դուրս է գալիս:

Իսկ վագրը մտածում է. «Բոլորովին հիմար գազան է մարդը: Չէ՞ որ նա կարող էր ինձնից փրկվել, եթե մնար իր որջում: Նա նույնիսկ դա չհասկացավ»:

– Չե՞ս ուզում տեսնել, թե որքան լավ է իմ որջի ներսը,– հարցնում է փայտահատը:

– Ուզում եմ,– ասում է վագրը և ներս մտնում:

Եվ հենց որ վագրը ներս է մտնում, փայտահատը շրխկոցով ծածկում է դուռը, փակում մի հաստ ցիցով և հանգիստ գնում ծառ կտրելու:

– Էյ,– գոռում է վագրը:– Իսկույն բաց թող ինձ այստեղից: Արեգակն արդեն ծածկվում է լեռան ետևը, իսկ ես դեռ քեզ չեմ կերել:

– Եվ չես էլ ուտի,– ասում է փայտահատը:– Հաղթում է նա,– ով ավելի խելոք է, և ոչ թե նա, ով ավելի ուժեղ է: Մնաս բարով, հիմա՛ր վագր: Քո հայրը քեզնից ավելի խելացի է եղել:

Որքան էլ չարչարվում է վագրը, չի կարողանում տնակի դուռը կոտրել, մարդը շատ ամուր և լավ էր շինել այն:

Իսկ երեկոյան դեմ փայտահատը հրացանը վերցրած գալիս է իր տնակի մոտ, սպանում վագրին, իսկ նրա մորթուց խրտվիլակ շինում:

Բովանդակություն

Հենզելն ու Գրետելը 3
Գրիմ եղբայրներ, թարգմ. և փոխադր.՝ Հովհ. Թումանյան
Անտառի տնակը 15
Գրիմ եղբայրներ, թարգմ. և փոխադր.՝ Հովհ. Թումանյան
Աղջիկը, ձկնիկը և կապիկը 23
(ճապոնական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Գոռոզ չղջիկը 30
(ամերիկյան ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Մի պարկ խնձոր 33
(Վլադիմիր Սուտեև, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Զարմանալի աշուղը 39
(Գրիմ եղբայրներ, թարգմ. և փոխադր.՝ Հովհ. Թումանյան)
Յոթ եղբոր մեկ քույրը 46
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Իմաստուն բվեճը 62
(տուվայական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ Մկրտչյան)
Վագրը, եղջերուն և աղվեսը 66
(չինական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Է. Ավագյան)
Արծիվը աղավնատնում 68
(անգլիական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Գայլն ու պախրան 80
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Հիմար վագրի հեքիաթը 82
(չինական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)

Կազմող՝
Նազելի Կարապետյան

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

Նկարազարդումը՝
Լուիզա Գալստյանի

Համակարգչային ձևավորումը՝
Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House